ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ԶԵԿՈՒՅՑ

Հայաստանի Հանրապետության Դիլիջանի Համայնքապետարանի 2024թ. հունվարի 1-ից 2025թ. հունվարի 1 ընթացքում կատարված աշխատանքի ընթացքի և արդյունքների մասին

Մարտի 7, 2025
Դիլիջան

Բովանդակություն

Նախաբան 3
Աշխատակազմ.....4
Դիլիջանի համայնքապետարանի մամուլ.....7
Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժին 7
Դիլիջանի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին.....9
Կրթության, մշակույթի և սպորտի ոլորտ 12
«Դիլիջանի Ղազարոս Աղայանի անվան կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ.....16
«Դիլիջան մարզահամալիր» ՀՈԱԿ 17
«Դիլիջանի մշակույթի պալատ» ՀՈԱԿ 18
«Դիլիջանի երկրագիտական թանգարան–պատկերասրահ» ՀՈԱԿ 19
«Դիլիջանի մանկական երաժշտական դպրոց» ՀՈԱԿ 20
«Դիլիջանի Հովհաննես Շարամբեյանի անվան մանկական գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ ..21
Նախադպրոցական ուսումնական հաստատություններ 25
«Դիլիջան համայնքի տրանսպորտ և լուսավորություն» ՀՈԱԿ 27
«Դիլիջան համայնքի կոմունալ սպասարկում» ՀՈԱԿ 28
«Դիլիջանի բնակարանային տնտեսություն» ՀՈԱԿ 29
Դիլիջան համայնքի գյուղական բնակավայրեր.....29
Թեղուտ գյուղական բնակավայր.....29
Հաղարծին գյուղական բնակավայր 30
Գոշ գյուղական բնակավայր.....30
Խաչարձան գյուղական բնակավայր.....30
Աղավնավանք գյուղական բնակավայր 31
Հովք գյուղական բնակավայր 31

Նախաբան

Հայաստանի Հանրապետության Դիլիջան համայնքը հանգստավայրային և առողջարանային բնակավայր է. գտնվում է Տավուշի մարզում՝ մարզկենտրոն Իջևանից 36 կմ հարավ–արևմուտք: Քաղաքը գնտվում է Աղստև գետի ափին՝ ծովի մակերևույթից 1100-1510մ բարձրության վրա: Խոշորացված համայնք է և ընդգրկում է հետևյալ գյուղական բնակավայրերը. Թեղուտ, Հաղարծին, Գոշ, Աղավնավանք, Խաչարձան, Հովք:

Դիլիջանը Հայաստանի ամենադինամիկ զարգացող զբոսաշրջային համայնքներից է: Այստեղ են գտնվում Հայաստանի կարևոր կենտրոններից մի քանիսը. ՀՀ Կենտրոնական բանկի ուսումնահետազոտական կենտրոնը, Դիլիջանի միջազգային դպրոցը, Դիլիջանի կենտրոնական դպրոցը:

Դիլիջանը որպես համայնք խոշորացվել է 2016 թվականին, որից հետո ձևավորվել է Դիլիջան համայնքը՝ 6 գյուղական բնակավայրերով. Թեղուտ, Հաղարծին, Գոշ, Խաչարձան, Աղավնավանք, Հովք:

Դիլիջանի համայնքապետարանի ենթակայության ներքո են գործում շուրջ 17 համայնքային կազմակերպություններ:

Սույն զեկույցում կներկայացնենք 2024թ. հունվարի 1-ից 2025թ. հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում (այսուհետ՝ 2024-2025թթ.) Դիլիջան համայնքում կատարված աշխատանքների ընթացքը և վերջնարդյունքը:

Աշխատակազմ

2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում Դիլիջանի համայնքապետարանի կողմից իրականացվել է հետևյալ գործընթացը.

1. Դիլիջան համայնքի ղեկավարի կողմից արձակվել է 187 կարգադրություն,
2. համայնքի ղեկավարի կողմից կայացվել է 1366 որոշում,
3. Աշխատակազմի քարտուղարի կողմից արձակվել է 221 հրաման,
4. 2024 թվականին աշխատակազմի աշխատակիցների կողմից պատրաստվել է 2041 ելից գրություն,
5. Նշված ժամանակաշրջանում ստացվել է 4978 մտից գրություն, որից 2041-ը՝ դիմում,
6. 2024 թվականին տրվել է 5003 հանձնարարական, որից կատարվել է 4703-ը, իսկ 300-ը ընթացքի մեջ է,
7. 2024 թվականի ընթացքում տեղի է ունեցել 12 ավագանու նիստ, որի արդյունքում կայացվել է 280 ավագանու որոշում:

Դիլիջան համայնքի ավագանու անդամների մոտ ընդունելության գրանցում չի իրականացվել: Տրվել է 97 թույլտվություն համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների, ինչպես նաև օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ դրանց փոխարինիչների վաճառքի համար:

Տրվել է 62 թույլտվություն համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման համար: Տրվել է 4 թույլտվություն համայնքի վարչական տարածքում բացօթյա առևտրի կազմակերպման համար: Տրվել է 59 թույլտվություն համայնքի վարչական տարածքում հանրային սննդի օբյեկտներում ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի իրացման համար:

Տրվել է 2 թույլտվություն համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առք ու վաճառք իրականացնելու համար: Տրվել է 8 թույլտվություն համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի համար: Տրվել է 93 թույլտվություն համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու համար:

Օրինականացվել է 33 ինքնակամ կառուցված շինություն քաղաքացիների կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերում: Օրինականացվել և տնօրինվել է 80 ինքնակամ կառուցված շինություն համայնքի (պետության) սեփականություն հանդիսացող հողամասերում:

Տրվել է 16 կառուցապատման կամ վարձակալության իրավունքի տրամադրման պայմանագիր: Ճշտվել է 72 շինության կամ հողամասի կոորդինատ, ծածկագիր կամ տեղադիրք: Նշանակվել է 3 խնամակալ (հոգաբարձու) անչափահասների նկատմամբ: Պատրոնաժ է սահմանվել 1 քաղաքացու նկատմամբ: Նշանակվել է 2 խնամակալ անգործունակ ճանաչված անձանց նկատմամբ: Տրամադրվել է 805 տեղեկանք փաստացի բնակության վայրի (հասցեի) վերաբերյալ: Տրամադրվել է 1070 տեղեկանք բնակչի ընտանիքի կազմի վերաբերյալ:

Տրամադրվել է 151 տեղեկանք հանգուցյալի՝ մինչև մահը փաստացի բնակության վայրի վերաբերյալ: Տրամադրվել է 17 տեղեկանք ժառանգատուի մահից հետո ժառանգված գույքը փաստացի տիրապետելու կամ կառավարելու վերաբերյալ: Տրամադրվել է 12 տեղեկանք գյուղատնտեսական նպատակներով օգտագործվող հողատարածքի վերաբերյալ: Տրամադրվել է 30 տեղեկանք տնօրինած անասնատեսակի և դրա քանակի վերաբերյալ: Տրամադրվել է 18 տեղեկանք մահացածին համայնքի/բնակավայրի գերեզմանատանը հուղարկավորելու մասին: Տրամադրվել է 96 քաղվածք հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի որոշումներից:

Տրվել է 1065 հաստատում անշարժ գույքի հատակագծերի համար: Տրվել է 199 թույլտվություն համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության համար: Տրվել է 18 թույլտվություն վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների համար: Տրվել է 14 թույլտվություն շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման համար: Տրվել է 96 ավարտական ակտ շենքերի և շինությունների շինարարության ավարտը փաստագրելու համար: Տրվել է 226 թույլտվություն ճարտարապետահատակագծային առաջադրանքի կամ նախագծման համար: Տրվել է 25 թույլտվություն հողամասի նպատակային նշանակության փոփոխման համար: Տրվել է 236 թույլտվություն հողամասի գործառնական նշանակության փոփոխման համար: Տրվել է 7 թույլտվություն շենքերի կամ դրանց հատվածների գործառնական նշանակության փոփոխման համար: Տրվել է 24 որոշում անշարժ գույքի օբյեկտի վերահասցեավորման և հասցեի չեղյալ համարելու համար: Տրվել է 340 որոշում նոր հասցեի տրամադրման համար:

Աճուրդային կարգով օտարվել է 96 հողամաս: Տրվել է 30 թույլտվություն մրցույթային կարգով հողամասի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի համար: Տրվել է 7 թույլտվություն համայնքային սեփականություն համարվող բնակարանի օտարման համար: Տրվել է 4 թույլտվություն խնամարկյալի գույքի օտարման, նվիրատվության, վարձակալության կամ գրավադրման համար: Տրվել է 7 թույլտվություն առևտրի, հանրային սննդի, զվարճանքի օբյեկտների կողմից ժամը 24.00-ից հետո աշխատելու համար: Տրվել է 6850 ծառայություն ֆիզիկական անձանց կենցաղային աղբահանության համար: Տրվել է 132 ծառայություն իրավաբանական անձանց կենցաղային աղբահանության համար:

Կազմակերպվել է 297 ընդունելություն արտադպրոցական հաստատություններում: Կազմակերպվել է 130 ընդունելություն մանկապատանեկան մարզադպրոցներում: Տրամադրվել է 494 պատասխան հարցումների հիման վրա: Հերթագրվել է 1170 երեխա նախադպրոցական հաստատություններում: Տրվել է 353 սոցիալական աջակցության ծառայություն: Համայնքի ղեկավարի մոտ գրանցվել է 733 ընդունելություն:

Կապ է հաստատվել Արցախից բռնի տեղահանված և Դիլիջան համայնքում բնակեցված 293 ընտանիքի հետ, գնահատվել նրանց սոցիալ-կենցաղային կարիքները: Ուսումնասիրվել են ընտանիքների անդամների առողջական, իրավական, կրթական խնդիրները: Կատարվել է իրազեկում աշխատատեղերի առկայության վերաբերյալ՝ հաշվի առնելով անձանց մասնագիտական ունակությունները: Ինտեգրման ողջ ընթացքում տրամադրվել է աջակցություն՝ ուղղորդման, միջնորդության և խորհրդատվության միջոցով:

Արցախից բռնի տեղահանված բնակիչների համար կազմակերպվել են մի շարք հանդիպումներ.

- Դիլիջան համայնքի ղեկավարի հետ հանդիպում – քննարկվել են բռնի տեղահանման հետևանքով առաջացած մարտահրավերները, ուղղորդվել է աջակցություն:
- Տավուշի մարզպետարանի ներկայացուցիչների հետ հանդիպումներ – իրազեկվել են ԼՂ-ից տեղահանված ընտանիքների բնակարանային աջակցության ծրագրի վերաբերյալ:
- «Շեն» ՀԿ-ի հետ համագործակցություն – կազմակերպվել է սոցիալ-տնտեսական վերականգնման ծրագիր, մասնակցել է 85 անձ, շահառու՝ 15 ընտանիք: Ֆինանսավորումը՝ 3,684,000 ՀՀ դրամ:
- «ԿԱԶԱ» հիմնադրամի հետ համագործակցություն – «Խթան» ծրագրի իրազեկում, մասնակցել է 32 կին, հատկացված գումարը՝ 1,500,000 ՀՀ դրամ:
- «ԱՌՆԱՊ» հիմնադրամի հետ համագործակցություն – կատարվել է կարիքների գնահատում, պարենի և կենցաղային պարագաների բաշխում:
- Միգրացիայի միջազգային կազմակերպության (IOM) հետ հանդիպումներ – իրազեկում, դասընթացներ, հավաստագրերի շնորհում, ծրագրի արժեքը՝ 4,900,000 ՀՀ դրամ:

- IOM-ի հետ երկրորդ համագործակցություն – բնակարանների վերանորոգման մարդասիրական աջակցություն (մինչև 1,500,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր շահառուին)։
- Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնի ներկայացուցիչների հետ հանդիպումներ - մտքերի փոխանակում, խորհրդատվություն։
- «Զարգացման սկզբունքներ» ՀԿ-ի հետ համագործակցություն – կապի հաստատում համայնքի հետ, փափուկ հմտությունների դասընթացներ։
- ՀԲԸՄ-ի հետ հանդիպում – «AGBULEAP» ծրագրի շրջանակներում «Աշխատանքի տոնավաճառ» միջոցառման իրազեկում։
- «UOU մանկական գյուղեր» հիմնադրամի հետ համագործակցություն – դասընթացների իրազեկում, իրականացում։
- «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի հետ հանդիպում – կարիքի գնահատում, պարենի, կենցաղային պարագաների և սարքավորումների հատկացում, իրավաբանական խորհրդատվություն։
- Կարմիր խաչի միջազգային կոմիտեի հոգեբան-խորհրդատուի հետ համագործակցություն - հոգեսոցիալական աջակցության ծրագրի իրականացում։
- Մասնակցություն համայնքային միջոցառումներին – արցախյան մշակույթի ներկայացում, ազգային տաղավարի ցուցադրություն Դիլիջանի 480-ամյակի տոնակատարության ժամանակ։
- Հաշվետու ժամանակահատվածում Դիլիջան համայնքի ղեկավարի և Տավուշի մարզպետի միջնորդությամբ՝ ՀՀ Կառավարություն են ներկայացվել արցախցիներին վերաբերող մի շարք հարցեր, որոնք դրական եզրակացություն ստանալուց հետո ներառվել են Կառավարության մի շարք որոշումներում։

2024թ. սեպտեմբերից համակարգվել են Դիլիջան համայնքում բնակվող ազգային փոքրամասնությունների (հույներ, քրդեր, մոլոկաններ) խնդիրները։ Իրականացվել է համագործակցություն հանրապետության այլ բնակավայրերի համայնքների հետ, որի արդյունքում նրանք մասնակցել են Դիլիջանի 480-ամյակին նվիրված տոնակատարությանը։ 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ Դիլիջան համայնքում բնակվում են Արցախից բռնի տեղահանված 178 ընտանիք, մոլոկան՝ 27 ընտանիք, քուրդ՝ 19 ընտանիք, հույն՝ 4 ընտանիք։

Դիլիջանի ՔԿԱԳ սպասարկման կենտրոնում կատարվել են քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումների դիմումների ընդունում.

- Ծննդյան – 153
- Ամուսնության – 84
- Ամուսնալուծության – 16
- Հայրության որոշման – 58
- Մահվան – 32
- ՔԿԱԳ գրանցումներում ուղղումներ, լրացումներ, փոփոխություններ կատարելու – 110
- Քաղաքացիական կացության ակտի վերականգնման – 107
- Անվան, ազգանվան, հայրանվան փոխման - 3
- ՔԿԱԳ վկայականների կրկնօրինակների տրամադրման – 144
- Ակտային գրանցումների առկայության կամ բացակայության վերաբերյալ տեղեկանքների տրամադրման – 172
- Կատարված ուղղման գործեր – 108
- Վկայականների տրամադրում – 37
- ՔԿԱԳ նախկին ակտային գրանցումների թվայնացում – 1090
- Իրավասու մարմինների կողմից ստացված և ուղարկված հարցումներ, հաղորդումներ – 753, հարցումների համաձայն տրամադրվել են տեղեկություններ քաղաքացիական

կացության ակտի պետական գրանցման վերաբերյալ և օրենքով սահմանված դեպքերում ակտերի գրանցման պատճեններ:

- Ընդհանուր գործարքների քանակը 2867 է:

Դիլիջանի համայնքապետարանի մամուլ

2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում Դիլիջանի համայնքապետարանի պաշտոնական կայքերն են համարվել «Դիլիջանի համայնքապետարան» համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը (www.dilijancity.am) և «Դիլիջանի համայնքապետարան» ֆեյսբուքյան էջը (https://www.facebook.com/MunicipalityOfDilijan): Պաշտոնական էլեկտրոնային հասցեներն են dilijan@mta.gov.am և dilijan1@yahoo.com: Յուրաքանչյուր ամսվա առաջին և տասնհինգերորդ օրերին կատարվել է Backups աշխատանք՝ համակարգի աշխատանքի անվտանգության նպատակով պահպանվել է ՀԿՏՀ համակարգի պատճենը արտաքին կրիչ սարքի վրա: Ապահովվել է ելից գրությունների առաքումը ՀԿՏՀ տարբերակով:

2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ ֆեյսբուքյան էջի հետևորդների թիվը եղել է 7079, որից 738-ը էջին միացել է հաշվետու տարվա ընթացքում (Տե՛ս Հավելված 1): Ապահովվել է 848 550 ծածկույթ (դիտումներ), ինչը 50%–ով ավելին է, քան 2023 թվականի ցուցանիշը: Հետազոտությունը ցույց է տալիս, որ էջերով հետաքրքրված է կանանց 60.8%–ը, տղամարդկանց՝ 39.2%-ը: Հետևորդների ճնշող մեծամասնությունը Տավուշի մարզից են, ապա Երևանից, Մոսկվայից: Էջը հավանել կամ տարբեր մեկնաբանություններ են թողել 218 503 անգամ, տարբեր հրապարակումներով կիսվել 2450 անգամ:

Մեկ տարվա ընթացքում Դիլիջանի համայնքապետարանի պաշտոնական կայքէջերում լուսաբանվել են համայնքում տեղի ունեցող միջոցառումները, համայնքապետարանի կողմից արվող աշխատանքները, սուբվենցիոն ծրագրերը: Պատրաստվել են մի քանի հոլովակներ՝ համայնքի մասին պատմող, հաշվետու և ամփոփիչ:

Համագործակցություն է եղել Հայաստանի Հանրային հեռուստատեսության, Տավուշ Հեռուստաընկերության և մի շարք այլ լրատվական կայքերի հետ:

Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժին

2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժինն իրականացրել է մեծաթիվ աշխատանքներ: Դիլիջան համայնքում 2024 թվականին իրականացվեցին բազմաթիվ ծրագրեր, որոնց ընդհանուր բյուջեն կազմեց 2 921 410 403 ՀՀ դրամ, որից համայնքի կողմից հատկացվեց 848 856 194 ՀՀ դրամ, ՀՀ կառավարության կողմից՝ 2 058 142 166 ՀՀ դրամ, իսկ այլ ներդրողների կողմից՝ 14 412 039 ՀՀ դրամ:

Համայնքի միջոցներով իրականացված ծրագրերի ընդհանուր բյուջեն կազմեց 58 543 549 ՀՀ դրամ: Ի կատար ածվեցին հետևյալ աշխատանքները.

Դիլիջան քաղաքի Գետափնյա 72 շենքի տանիքը հիմնանորոգվեց, որի արդյունքում շենքի 60 բնակարանի բնակիչները ստացան բարելավված բնակելի պայմաններ: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմեց 27 805 669 ՀՀ դրամ:

Իրականացվեցին ներհամայնքային նշանակության ճանապարհների փոսային նորոգման աշխատանքներ, որոնց համար հատկացվեց 20 548 792 ՀՀ դրամ։

Գետափնյա 90 շենքին հարակից տարածքում հիմնվեց խաղահրապարակ և բակային մարզասարքեր, ինչը ստեղծեց նոր հնարավորություններ համայնքի բնակիչների համար։ Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմեց 10 189 088 ՀՀ դրամ, և այն իրականացվեց մասնակցային բյուջետավորման շրջանակներում։

Համայնքի և Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիայի համաֆինանսավորմամբ Դիլիջանի թիվ 4 հիմնական դպրոցի հարակից տարածքում կառուցվեց արհեստական խոտածածկով ֆուտբոլի խաղադաշտ։ Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմեց 17 369 947 ՀՀ դրամ, որից համայնքի ներդրումը կազմեց 2 957 908 ՀՀ դրամ (17%)։

Համայնքի և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ իրականացված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում վերանորոգվեց Դիլիջանի թիվ 5 մանկապարտեզը, որի ընդհանուր բյուջեն կազմեց 69 697 588 ՀՀ դրամ։ Այս ծրագրում համայնքի ներդրումը կազմեց 33%, իսկ ՀՀ կառավարության ներդրումը՝ 67%։

Աղավնավանք բնակավայրում ներգյուղական 3-րդ, 4-րդ, 5-րդ փողոցները տուֆապատվեցին, որոնց ընդհանուր բյուջեն կազմեց 112 039 460 ՀՀ դրամ։ Ծրագրի շրջանակում համայնքի ներդրումը կազմեց 35%, իսկ ՀՀ կառավարության ներդրումը՝ 65%։ Տվյալ փողոցների երկարությունը կազմեց շուրջ 1,3 կմ։

Մյասնիկյան-Սայաթ-Նովա-Աղստև հատվածի սելավատարի հիմնանորոգման համար տրամադրվեց 43 027 619 ՀՀ դրամ, որի 60%-ը ներդրվեց համայնքի կողմից, իսկ 40%-ը՝ ՀՀ կառավարության կողմից։ Ծրագիրն ընթացքի մեջ է, վերանորոգված հատվածի երկարությունը կազմեց 200 մ։

Գետափնյա փողոցը ասֆալտապատվեց և մայթերը հիմնանորոգվեցին, որի համար հատկացվեց 894 279 057 ՀՀ դրամ։ Ծրագիրն ընթացքի մեջ է, իսկ վերանորոգված ճանապարհի երկարությունը կազմեց շուրջ 2,4 կմ։

Դիլիջան քաղաքի 5 բազմաբնակարան շենքերի տանիքները հիմնանորոգվեցին, ինչի արդյունքում բարելավվեցին 141 բնակարանի բնակիչների կենցաղային պայմանները։ Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմեց 72 724 460 ՀՀ դրամ, որից համայնքի ներդրումը կազմեց 60%, իսկ ՀՀ կառավարության ներդրումը՝ 40%։ Ծրագիրն ընթացքի մեջ է։

Հայաստանի Համահայկական հիմնադրամի և արգենտինահայ բարերարների համաֆինանսավորմամբ Խաչարձան բնակավայրում կառուցվեց նոր լուսավորության համակարգ, որի երկարությունը կազմեց շուրջ 2 կմ։

ՀՀ կառավարության կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում Թեղուտ բնակավայրի 1-ին փողոցից մինչև Հաղարծին բնակավայրի 12-րդ փողոց ընկած ճանապարհահատվածը վերանորոգվեց, որի ընդհանուր արժեքը կազմեց 622 800 000 ՀՀ դրամ։ Ծրագիրն ընթացքի մեջ է, ճանապարհի երկարությունը կազմեց շուրջ 2,5 կմ։

Վերանորոգվեց Տ-10-34/Մ-4/ - Լեռնային Հայաստան առողջարան ավտոճանապարհի 2,2 կմ հատվածը, որի համար տրամադրվեց 234 000 000 ՀՀ դրամ։

Մ-8, Վանաձոր (Մ-6 հատման կետ) - Դիլիջան միջպետական նշանակության ավտոճանապարհի 2 կմ հատվածը հիմնանորոգվեց, որի արժեքը կազմեց 435 116 352 ՀՀ դրամ։

Է. Ծատուրյան փողոցի սկզբնամասում գտնվող հենապատը վերանորոգվեց, որի համար հատկացվեց 32 615 000 ՀՀ դրամ։

2023 թվականին հաստատված և 2024 թվականին իրականացված սուբվենցիոն ծրագրերի ընդհանուր բյուջեն կազմեց 329 197 371 ՀՀ դրամ, որից համայնքի ներդրումը կազմեց 119 122 041 ՀՀ դրամ, իսկ ՀՀ կառավարության ներդրումը՝ 210 075 328 ՀՀ դրամ։

Խաչարձան բնակավայրի 2-րդ և 3-րդ փողոցները տուֆապատվեցին, որոնց ընդհանուր բյուջեն կազմեց 78 059 228 ՀՀ դրամ։ Համայնքի ներդրումը կազմեց 40%, իսկ ՀՀ կառավարության ներդրումը՝ 60%։ Նշված փողոցների ընդհանուր երկարությունը կազմեց շուրջ 1,2 կմ։

Թեղուտ բնակավայրում կառուցվեց ջրագիծ, որի երկարությունը կազմեց շուրջ 8 կմ: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմեց 251 138 143 ՀՀ դրամ, որից համայնքի ներդրումը կազմեց 35%, իսկ ՀՀ կառավարության ներդրումը՝ 65%:

Դիլիջանի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին

2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

1. 2024 թվականին համայնքի վարչական բյուջեի տարեկան ճշտված պլանը /եկամուտները/ կազմել է 1475222.9 հազար դրամ, որից վարչական սեփական եկամուտները կազմել են 654447.7 հազար դրամ կամ վարչական բյուջեի 44.4 %-ը, պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների և նպատակային հատկացումների (սուբվենցիաներ) գծով՝ 820775.2 հազար դրամ կամ վարչական բյուջեի 55.6%-ը: 2024 թվականի վարչական ընդհանուր բյուջեն պլանավորվածի նկատմամբ կատարվել է 1468596.6 հազար դրամով կամ 99.55%: Հաշվետու տարում վարչական սեփական եկամուտները պլանավորվածի նկատմամբ հավաքագրվել է 647821.4 հազար դրամ, որը կազմում է սեփական եկամուտների 98.99%-ը: Ընդհանուր առմամբ վարչական բյուջեի հավաքագրած եկամուտների 44.1 %-ը ապահովվել է սեփական եկամուտների հաշվին, իսկ 55.9 %-ը՝ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների և նպատակային հատկացումների (սուբվենցիաներ) հաշվին:

2. Անշարժ գույքի հարկի, փոխադրամիջոցի գույքահարկի, հողի հարկի և շինության գույքահարկի գծով սպասարկվել է թվով 11548 ֆիզիկական անձ և 347 իրավաբանական անձ:

3. Լրացվել է 165 անշարժ գույքի և փոխադրամիջոցների գույքահարկի տվյալների ուղղման հայտեր՝ բազայում տեղ գտած անճշտությունները շտկելու համար:

4. Ուղարկվել է թվով 395 հատ ծանուցագրեր՝ նախորդ տարիների հարկային պարտավորությունների կատարման վերաբերյալ, որի արդյունքում գանձվել է 21797.8 հազար ՀՀ դրամ:

5. Կազմվել է 34 հատ վարչական վարույթի որոշում, որից՝ 2-ը վճարվել է ամբողջությամբ, 9-ը մասնակի, 6-ի նկատմամբ կայացվել է վճիռ, 17-ը կարճվել է՝ ոչ պատշաճ ծանուցման պատճառով:

6. Հավաքագրվել է 57689.5 հազար ՀՀ դրամ գույքի վարձակալությունից եկամուտներ:

7. Թվով 97 կազմակերպությունների տրվել է ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություններ:

8. Թվով 62 կազմակերպությունների տրվել է հանրային սննդի կազմակերպման թույլտվություններ:

9. Թվով 8 կազմակերպությունների տրվել է հեղուկ վառելիքի, սեղմված բնական գազերի մանրածախ վաճառքի թույլտվություններ:

10. Թվով 7 կազմակերպությունների տրվել է թույլտվություն ժամը 24.00-ից հետո առևտրի, հանրային սննդի կազմակերպման համար:

11. Թվով 4 կազմակերպությունների տրվել է բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվություններ:

12. Թվով 93 կազմակերպությունների տրվել է այլ արտաքին գովազդի տեղադրման թույլտվություններ։

13. Թվով 6 կազմակերպությունների տրվել է համայնքի կամ բնակավայրի անվանումը իրենց ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն։

14. Թվով 2 կազմակերպությունների տրվել է թանկարժեք մետաղների վաճառքի թույլտվություն։

15. 2024 թվականի ընթացքում իրավաբանական անձանց հետ կնքվել է թվով 132 աղբահանության ծառայությունների մատուցման պայմանագրեր, որոնց արդյունքում հավաքագրվել է 33808.1 հազար ՀՀ դրամ, իսկ համայնքի բնակիչներից հավաքագրվել է 9194.9 հազար ՀՀ դրամ։

16. Սոցիալապես անապահով 353 ընտանիքի տրամադրվել է դրամական օգնություն՝ 12000.0 հազար ՀՀ դրամ։

17. Նորածին երեխաների թվով 154 ընտանիքի տրամադրվել է դրամական աջակցություն՝ 4940.0 հազար ՀՀ դրամ։

18. Դիլիջան համայնքից զորակոչված զինծառայողներին տրվել է նվերներ /հիգիենիկ պարագաներ/, որի արժեքը կազմել է 500.0 հազար ՀՀ դրամ։

19. Հանրակրթական դպրոցների առաջին դասարանցիներին տրամադրվել է գրենական պիտույքներ, որի ընդհանուր արժեքը կազմել է՝ 990.0 հազար ՀՀ դրամ։

20. Դիլիջան համայնքում գործող հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորող սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վճարների դիմաց տրամադրվել է 547.1 հազար ՀՀ դրամ փոխհատուցում։

21. Կազմվել և ներկայացվել է ամսեկան, եռամսյակային և տարեկան վիճակագրական հաշվետվությունները։

22. Յուրաքանչյուր ամիս կազմվել և ՀՀ Տավուշի մարզպետարան է ներկայացվել բյուջեի եկամուտների, ծախսերի, աղբահանության, ՀՈԱԿ-ի, աշխատավարձերի և այլ հաշվետվություններ։

23. Իրականացվել է Դիլիջանի համայնքապետարանի ենթակայությամբ գործող ՀՈԱԿ-ի բյուջեների կազմում, ֆինանսական վերահսկողություն։

24. ՀԾ և Tax Service ծրագրերով դուրս է գրվել 1853 հատ հաշվարկային փաստաթղթեր, որը կազմում է 68973.6 հազար ՀՀ դրամ։

25. Tax Service ծրագրով ընդունվել է 323 հատ հաշվարկային փաստաթղթեր, որը կազմում է 112096.2 հազար ՀՀ դրամ։

26. Tax Service ծրագրով ընդունվել է 484 հարկային հաշիվներ, որը կազմում է 780803.4 հազար ՀՀ դրամ։

27. Client Treasury ծրագրով իրականացվել 8 300 հատ ընդհանուր գործարքներ։

28. Օրենքով սահմանված կարգով իրականացվել է գնման գործընթացներ՝ մասնավորապես.

- Բաց մրցույթ - թվով 10 գնման գործընթաց
- Գնանշման հարցում - թվով 32 գնման գործընթաց
- Մեկ անձից գնում – թվով 29 գնման գործընթաց
- Էլեկտրոնային աճուրդ – թվով 18 գործընթաց

Գնման գործընթացների շրջանակներում կազմվել են թվով 60 գնման ընթացակարգերի հրավերներ (հայերեն, ռուսերեն լեզուներով, հայտարարության տեքստերը նաև անգլերեն) և հրապարակվել են armeps.am համակարգում, ինչպես նաև dilijancity.am կայքում: Կազմվել են պայմանագրեր՝ թվով 124 հատ, համաձայնագրեր՝ թվով 32 հատ, արձանագրություններ՝ թվով 1218 հատ (հայերեն և ռուսերեն լեզուներով), կարգադրության նախագծեր՝ թվով 177 հատ, ներկայացվել են հաշվետվություններ:

29. Կազմվել և ավագանու հաստատմանն է ներկայացվել 2024 թվականի ՏԱՊ-ը։

30. Կազմվել և ավագանու հաստատմանն է ներկայացվել Դիլիջան համայնքի 2025-2027 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրերի փաթեթը։

31. Կազմվել և ավագանու հաստատմանն է ներկայացվել ամենամյա գույքագրման փաստաթղթերը:

32. Կազմվել և ավագանու հաստատմանն է ներկայացվել Դիլիջան համայնքի տարածքում 2025 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը:

33. Կազմվել և ավագանու հաստատմանն է ներկայացվել Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի և ՀՈԱԿ-ի 2025 թվականի հաստիքացուցակները և դրույքաչափերը:

34. Կազմվել և ավագանու հաստատմանն է ներկայացվել Դիլիջան համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեն, որը կազմել է 1700500.0 հազար ՀՀ դրամ:

35. Իրականացվել է «Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Գետափնյա 90 շենքին հարակից խաղահրապարակի և բակային մարզասարքերի հիմնում» ծրագիրը: Ընդհանուր բյուջեն կազմել է՝ 10 153 088 ՀՀ դրամ: Ծրագիրն իրականացվել է մասնակցային բյուջետավորման շրջանակներում:

36. 2024 թվականի տարեվերջյան ավագանու որոշմամբ 2025 թվականին համայնքում մասնակցային բյուջետավորման շրջանակներում իրականացվելիք ծրագրերի համար հատկացվել է 20 000 000 ՀՀ դրամ:

37. Համայնքի միջոցներով իրականացվել է Դիլիջան համայնքի ներհամայնքային նշանակության ճանապարհների փոսային նորոգման աշխատանքներ: Ընդհանուր բյուջեն կազմել է՝ 20 548 792 ՀՀ դրամ:

38. Համայնքի միջոցներով իրականացվել է «Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Գետափնյա 72 շենքի տանիքի հիմնանորոգում» ծրագիրը: Ընդհանուր բյուջեն կազմել է՝ 27 805 669 ՀՀ դրամ:

Դիլիջան համայնքի 2024 թվականի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացվել են հետևյալ ծրագրերը.

39. «Դիլիջան համայնքի Աղավնավանք բնակավայրի 3-րդ, 4-րդ, 5-րդ փողոցների տուֆապատում»: Ընդհանուր բյուջեն կազմել է՝ 112 039 460 ՀՀ դրամ:

40. «Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրում ջրագծի կառուցում»: Ընդհանուր բյուջեն կազմել է՝ 251 138 143 ՀՀ դրամ:

41. «Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Մյասնիկյան-Սայաթ-Նովա-Աղստև հատվածի սելավատարի հիմնանորոգում»: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմել է՝ 43 027 619 ՀՀ դրամ:

42. «Դիլիջան համայնքի Խաչարձան բնակավայրի 2-րդ, 3-րդ փողոցների տուֆապատում»: Ընդհանուր բյուջեն կազմել է՝ 78 059 228 ՀՀ դրամ:

43. «Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի 5 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգում» (հասցեներ Գետափնյա 74, Մյասնիկյան 84, Օրջոնիկիձեի 77): Ընդհանուր բյուջեն կազմել է՝ 72 724 460 ՀՀ դրամ: Վերոնշյալ բազմաբնակարան բնակելի շենքերից՝ Գայի 84, Շամախյան 2Ա հասցեներում աշխատանքները շարունակվում են և տեղափոխվել են 2025 թվական:

44. 2024 թ. ընթացքում կազմվել են 2025թ.-ի սուբվենցիոն ծրագրերի նախնական հայտերը և ներկայցվել են ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմ:

45. 2024թ. ընթացքում կազմվել են 2025թ.-ի սուբվենցիոն ծրագրերի նախագծանախահաշվային փաստաթղթերը և ամբողջական փաթեթների հետ միասին ներկայացվել են ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմ: Ներկայացված են հետևյալ ծրագրերը՝

46. «Դիլիջան համայնքի Խաչարձան բնակավայրում ոռոգման ցանցի կառուցում» Ծրագրի ընդհանուր բյուջեն՝ 56 445 760 ՀՀ դրամ:

47. «Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի 6 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքներ» հասցեներ՝ Բարեկամության 3, Գետափնյա 68, 70, Կալինինի 87, Մոլդովական 10, 12: Ծրագրի ընդհանուր բյուջեն՝ 211 984 313 ՀՀ դրամ:

48. «Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի բազմաբնակարան բնակելի շենքերի բնակիչների սպասարկման համար մարդատար վերելակների փոխարինում նորով»։ Ծրագրի ընդհանուր բյուջեն՝ 322 461 740 ՀՀ դրամ։

49. «Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքում փողոցների ասֆալտապատում և մայթերի հիմնանորոգում (Խ.Վաթինյանի 35 հասցեից մինչև 83 հասցեն, Ուսանողական 1 հասցեից մինչև 77, Աբովյան 1 հասցեից մինչև 17/1 հասցեն և Շամախյան-Այգեստան-Թումանյան փողոցներ) և Դիլիջան քաղաքում և Գոշ բնակավայրում հենապատերի հիմնանորոգում և կառուցում»։ Ծրագրի ընդհանուր բյուջեն՝ 1 650 251 900 ՀՀ դրամ։

50. «Դիլիջան համայնքի Թեղուտ, Հաղարծին, Գոշ, Աղավնավանք և Հովք բնակավայրերի ներգյուղական ճանապարհների տուֆապատում» (Թեղուտ 3-րդ, 7-րդ, 11-րդ, 13-րդ փողոցներ, Հաղարծին 2-րդ, 5-րդ, 8-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ փողոցներ, Գոշ, Մ.Գոշի փողոց (3ա), 2-րդ, 3-րդ, 8-րդ, 13-րդ նրբանցք, Աղավնավանք 3-րդ փողոց, Հովք 1-ին փողոց)։ Ծրագրի ընդհանուր բյուջեն՝ 810 748 700 ՀՀ դրամ։

51. Ընդհանուր առմամբ կատարվել են թվով 1140 հատ հանձնարարականներ։

Կրթության, մշակույթի և սպորտի ոլորտ

2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում Դիլիջան համայնքում կրթության, մշակույթի և սպորտի ոլորտներում տեղի ունեցել մի շարք միջոցառումներ։

Հունվարի 28-ին՝ Հայոց բանակի օրը, Դիլիջան համայնքի ղեկավարը այցելեց Դիլիջանի թիվ N զորամաս՝ մասնակցեց հարգանքի տուրքի և ծաղիկների խոնարհման արարողությանը։

Փետրվարի 20-ին տեղի ունեցավ «Պատանի երաժիշտների Եվրատեսիլ» միջազգային մրցույթի դասական երաժիշտ-կատարողների մրցույթի լսումների 2-րդ՝ մարզային փուլը։ Միջոցառումն անցկացվեց Դիլիջանի մանկական երաժշտական դպրոցի դահլիճում, իսկ մասնակիցները ներկայացրին Դիլիջան, Նոյեմբերյան, Իջևան և Բերդ համայնքները՝ 10 երաժիշտ-կատարողների մասնակցությամբ։

Փետրվարի 23-ին իրականացվեց «Դասականը մարզերին» երաժշտական նախագիծը, որի հեղինակը Սեյրանուհի Գեղամյանն էր։ Կատարումը վստահված էր Վանաձորի կամերային նվագախմբին, որի գեղարվեստական ղեկավարն էր ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Ռուբեն Ասատրյանը։

Մարտի 1-ին ՀՀ Տավուշի մարզպետի գլխավորությամբ տեղի ունեցավ այց Աղավնավանք և Խաչարձան գյուղական բնակավայրեր՝ հանդիպելու Արցախից բռնի տեղահանված բնակիչների հետ։

Մարտի 15-ին Մ. Մելքոնյանի անվան ուսումնառազմական վարժարանում անցկացվեց Վազգեն Սարգսյանի ծննդյան 65-ամյակին նվիրված տոնական միջոցառումը։

Մարտի 16-ին Դիլիջանի մարզահամալիրում անցկացվեց «Rocking Dilijan» հունահռոմեական ոճի ըմբշամարտի ամենամյա առաջնությունը, որին մասնակցեցին 200-ից ավելի պատանիներ Հայաստանի բոլոր մարզերից։ Հյուրերի թվում էին Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը և ըմբշամարտիկ, օլիմպիական խաղերի ոսկե մեդալակիր Արթուր Ալեքսանյանը։

Մարտի 21-22-ին Դիլիջանի թիվ 2 հիմնական դպրոցում անցկացվեց «Սպորտլանդիա» մարզական միջոցառումը, որին մասնակցեցին Հովք, Թեղուտ, Հաղարծին բնակավայրերի միջնակարգ դպրոցները, ինչպես նաև Դիլիջանի թիվ 2, թիվ 4, թիվ 5, թիվ 6 հիմնական դպրոցները։

Մարտի 29-ին տեղի ունեցավ «Դուկո» երիտասարդական կենտրոնի բացման արարողությունը, որը կազմակերպվեց ՀՀ Կառավարության 2021-2026 թթ. ծրագրի և ՀՀ ԿԳՄՍ

նախարարության «Երիտասարդական կենտրոնների հիմնում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում: Միջոցառմանը մասնակցեցին ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը և Տավուշի մարզպետի տեղակալ Նարեկ Ղուշչյանը:

Ապրիլի 8-ին «Դիլիջանի մարզահամալիր» ՀՈԱԿ-ում անցկացվեց «ՀՀ Վարչապետի գավաթ» սիրողական սեղանի թենիսի մրցաշարի համայնքային փուլը, որին մասնակցեցին Դիլիջանի թիվ 2 հիմնական դպրոցը, Վ. Անանյանի անվան թիվ 5 միջնակարգ դպրոցը, թիվ 6 միջնակարգ դպրոցը և Թեղուտի միջնակարգ դպրոցը:

Ապրիլի 20-ին «Դիլիջանի երկրագիտական թանգարան–պատկերասրահում» կայացավ Երևանի պետական կամերային երգչախմբի «Գարնանային համերգ» խորագրով համերգային ծրագիրը՝ գեղարվեստական ղեկավար և խմբավար Քրիստինա Ոսկանյանի ղեկավարությամբ:

Ապրիլի 24-ին Դիլիջանի հուշարձանի տարածքում տեղի ունեցավ «Կոմիտասը մենք ենք» խորագրով միջոցառումը:

Ապրիլի 27-ին՝ Քաղաքացու օրը, անցկացվեց «Հայրենիքը պետությունն է: Սիրում ե՞ս հայրենիքդ՝ ուժեղացրու պետությունդ» խորագրով բանախոսությունը՝ Երևանի կինոյի և թատրոնի պետական ինստիտուտի ռեկտոր Սառա Նալբանդյանի մասնակցությամբ: Միջոցառմանը մասնակցեցին 100 հոգի, և այն անցկացվեց «Դիլիջանի մանկական երաժշտական դպրոց» ՀՈԱԿ դահլիճում:

Ապրիլի 30-ին իրականացվեց «Սպորտը հանուն հավասար հնարավորությունների» ծրագիրը, որը նախաձեռնել էին «Հույսի կամուրջ» ՀԿ-ն և «ՈՒԵՖԱ-ն երեխաների համար» հիմնադրամը: Ծրագրի նպատակն էր երեխաների ինտեգրումը կրթության և սոցիալական ոլորտներում: Մասնակիցներն էին ՀՀ Տավուշի մարզի 16 հանրակրթական դպրոցներում սովորող 240 հաշմանդամություն ունեցող աշակերտներ:

Մայիսի 4-ին տեղի ունեցավ «Հոգեսոցիալական աջակցության հմտություններ հայ օգնող աշխատակիցներին» ծրագիրը, որը իրականացվեց «ԵՄ-ն հանուն երկխոսության. Հոգեբանական աջակցություն (Հայաստան)» նախագծի շրջանակներում: Մասնակիցներն էին Դիլիջան համայնքի ՆՈՒՀ ոլորտի ներկայացուցիչները:

Մայիսի 18-ին «Դիլիջանի երկրագիտական թանգարան–պատկերասրահում» անցկացվեց «Թանգարանների գիշեր» միջոցառումը:

Մայիսի 18-ին Պարզ լճի 5 կմ տարածքում անցկացվեց «ՀՀ Վարչապետի գավաթ» դպրոցականների թիմային խճուղավազքի մրցաշարի եզրափակիչ փուլը, որին մասնակցեցին 11 թիմեր:

Մայիսի 24-ին կազմակերպվեց «Վերջին զանգ-2024» տոնական համերգային երեկոն:

Մայիսի 28-ին անցկացվեց «Հայաստանի Առաջին Հանրապետության 106-ամյակ» խորագրով միջոցառումը:

Հունիսի 1-ին Դիլիջանի մարզահամալիրում անցկացվեց սեղանի թենիսի մանկապատանեկան միջմարզային առաջնություն: Նույն օրը, Դիլիջանի կենտրոնական հրապարակում կայացավ հունիսմեկյան մանկական միջոցառում: Դիլիջանի կինոթատրոնում ցուցադրվեց «Անին ու Դանին» ֆիլմը: Կոմպոզիտորների տան Բեթհովենի անվան դահլիճում տեղի ունեցավ «Դիլիջան ֆորտե» համերգը Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանի գլխավորությամբ:

Հունիսի 13-ին Հաղարծնի մշակույթի տանը անցկացվեց «Ռուսական արտասահմանյան պոեզիա» միջոցառումը: Նույն օրը, «Ռուսական սփյուռքի տունը» և Սոլժենիցինի անվան ռուսական կենտրոնը 304 կտոր գիրք նվիրաբերեցին «Դիլիջանի գրադարանների կենտրոնացված համակարգ» ՀՈԱԿ-ին:

Հունիսի 22-ին անցկացվեց հայ-վրացական մշակութային-խոհանոցային «Միմինո» փառատոնը:

Հուլիսի 5-ին Դիլիջանի զբոսայգում անցկացվեց «Բարի գալուստ ամառ 2024» երաժշտական փառատոնը:

Հուլիսի 20-21-ին Դիլիջանի լճի հարակից տարածքում կայացավ «Արհեստների 2-րդ միջազգային փառատոնը»։ Միջոցառմանը մասնակցեց ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը։

Հուլիսի 21-ին անցկացվեց «Շառլ Ազնավուրի հոբելյանական 100-ամյակ» միջոցառումը։

Հուլիսի 28-ին Դիլիջանի անֆիթատրոնում կայացավ «Դիլիջանյան ամառ-2024» բեմարվեստի հանրապետական փառատոնը։ Փառատոնին մասնակցեցին շուրջ 50 պարային խմբեր Հայաստանի տարբեր մարզերից և Երևանից։ Կազմակերպիչ՝ «Մինորա» մշակութային կենտրոն։

Օգոստոսի 9-ին Դիլիջան այցելեցին «Քինգ Լոնգ» ավտոբուսների արտադրության գործարանի ներկայացուցիչները՝ քննարկելու էլեկտրական ավտոբուսների ներմուծման հարցը։

Օգոստոսի 10-ին Դիլիջանի Ամֆիթատրոնում ելույթ ունեցավ Արգենտինայից ժամանած «ՆԱՐԵԿ» հայկական ժողովրդական պարի համույթը՝ գեղարվեստական ղեկավար Ելենա Տեր-Մոնչեղյանի գլխավորությամբ։

Օգոստոսի 31-ին Գոշ գյուղական բնակավայրում անցկացվեց «Ճախրուկ» միջազգային ներառական փառատոնը։ Մասնակցեցին տարբեր մանկատների և խնամքի կենտրոնների սաներ։

Սեպտեմբերի 1-ին՝ Գիտելիքի օրը, համայնքի հանրակրթական դպրոցների առաջին դասարանների աշակերտներին հանձնվեցին նվերներ։

Սեպտեմբերի 4-ին՝ Արտակարգ իրավիճակների աշխատողի օրը, Դիլիջանի համայնքի ղեկավարը այցելեց ՆԳՆ փրկարար ծառայության Տավուշի մարզի փրկարար վարչություն։

Սեպտեմբերի 6-ին Դիլիջանի համայնքապետարան այցելեց Դոմինիկյան Հանրապետության դեսպանության գործերի հավատարմատար տիկին Սանդրա Սանտանան։

Սեպտեմբերի 7-ին անցկացվեց արհեստների եւ արվեստների ամենամյա փառատոնը։

Սեպտեմբերի 10-ին Հաղարծնի մշակույթի տան դահլիճում տեղի ունեցավ «Բերդ Մշակույթի Կենտրոն» մշակութային ՀԿ-ի «Ուտիք-Մեղեդի» ժող-էստրադային համույթի համերգային ծրագիրը՝ համույթի հիմնադիր և գեղարվեստական ղեկավար Արմեն Մելիքյանի գլխավորությամբ։ Ծրագիրը իրականացվեց ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ։

Սեպտեմբերի 11-ին Դիլիջան այցելեց Լյուքսեմբուրգի Պետանժ քաղաքի քաղաքապետ Ժան-Մարի Հալսդորֆի գլխավորած պատվիրակությունը։

Սեպտեմբերի 13-26-ն ընկած ժամանակահատվածում Դիլիջանի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արման Բազինյանը այցելեց Չինաստանի Ֆուճոու քաղաք՝ մասնակցելու տեղական ինքնակառավարման մարմինների համար կազմակերպված երկկողմ համագործակցության ծրագրին։

Սեպտեմբերի 14-ին Դիլիջանի երկրագիտական թանգարան–պատկերասրահում անցկացվեց «Դպրոցական բաժանորդային համակարգ» ծրագրի էքսպո-արշավը, որն իրականացվեց ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից։

Սեպտեմբերի 18-ին բացվեց Դիլիջանի թիվ 2 հիմնական դպրոցին կից նախադպրոցական ուսումնական հաստատությունը։ Ծրագիրն իրականացվեց «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ի, ՄԱԶԾ-ի և Դիլիջանի համայնքապետարանի համատեղ ֆինանսավորմամբ։

Սեպտեմբերի 21-ին՝ ՀՀ Անկախության օրվան նվիրված միջոցառման շրջանակներում, անցկացվեց դրոշի ծածանման արարողություն։

Սեպտեմբերի 27-ին շահագործման հանձնվեց Դիլիջանի թիվ 4 դպրոցի հարևանությամբ կառուցված մինի ֆուտբոլի խաղադաշտը, որը իրականացվեց Դիլիջանի համայնքապետարանի և «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» ՀԿ-ի համատեղ ծրագրով։

Հոկտեմբերի 1-ին՝ Տարեցների պաշտպանության միջազգային օրը, համայնքապետարանի աշխատակիցները այցելեցին համայնքի 100-ամյակը բոլորած կանանց։

Հոկտեմբերի 1-5-ը Դիլիջան այցելեց Սլովակիայի Պովաժսկա Բիստրիցա քաղաքի պատվիրակությունը՝ մասնակցելու «Դիլիջան-480» տոնակատարությանը։

Հոկտեմբերի 4-ին տեղի ունեցավ «Դիլիջան-480» տոնակատարությունը։

Հոկտեմբերի 4-ին վերաբացվեց Հովհաննես Շարամբեյանի անվան գեղարվեստի մանկական դպրոցը։

Հոկտեմբերի 5-ին Դիլիջանի երկրագիտական թանգարան-պատկերասրահում բացվեց «Վերադարձի կետ. Հայրենիք» ցուցադրությունը, հեղինակ՝ Քսենիա Յակուտովիչ։

Հոկտեմբերի 13-ին նշվեց Կոմիտասի 155-ամյակը՝ Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի մեներգիչների մասնակցությամբ։

Հոկտեմբերի 14-ին «ԻՄ ՔԱՅԼԸ» հիմնադրամը նվիրաբերեց երաժշտական գործիքներ Դիլիջանի մանկական երաժշտական դպրոցին։

Հոկտեմբերի 8-14-ին Դիլիջանի մարզահամալիրի տնօրեն Սասուն Ղամբարյանը մասնակցեց Խորվաթիայում անցկացված վետերանների աշխարհի առաջնությանը՝ 78 կգ քաշային կարգում դառնալով աշխարհի չեմպիոն։

Հոկտեմբերի 1-ին՝ տարեցների պաշտպանության միջազգային օրը, Դիլիջանի համայնքապետարանի աշխատակիցները այցելեցին համայնքի 100-ամյակը բոլորած կանանց։

Հոկտեմբերի 1-5-ը Դիլիջանում հյուրընկալվեց Սլովակիայի Հանրապետության Պովաժսկա Բիստրիցա քաղաքի պատվիրակությունը՝ փոխքաղաքապետ պարոն Իգոր Շթեյների և քաղաքային խորհրդի անդամ պարոն Ֆրանտիսեկ Մատուսիկի գլխավորությամբ։ Այցի նպատակը «Դիլիջան-480» տոնակատարությանը մասնակցելն էր։

Հոկտեմբերի 4-ին տեղի ունեցավ Հովհաննես Շարամբեյանի անվան գեղարվեստի մանկական դպրոցի վերաբացման արարողությունը։

Հոկտեմբերի 5-ին անցկացվեց «Դիլիջան-480» տոնակատարությունը։

Հոկտեմբերի 5-ին Դիլիջանի երկրագիտական թանգարան-պատկերասրահում բացվեց «Վերադարձի կետ. Հայրենիք» ցուցադրությունը, որի հեղինակն էր Քսենիա Յակուտովիչը։

Հոկտեմբերի 13-ին՝ Կոմիտասի 155-ամյակի առթիվ, Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի մեներգիչները հանդես եկան համերգային ծրագրով։

Հոկտեմբերի 14-ին «ԻՄ ՔԱՅԼԸ» բարեգործական հիմնադրամի գործադիր տնօրեն Աննա Հակոբյանը նվիրատվություն կատարեց Դիլիջանի մանկական երաժշտական դպրոցին՝ տրամադրելով երաժշտական գործիքներ, այդ թվում՝ թմբուկներ, սինթեզատոր, բարձրախոսներ և շեփորներ։

Հոկտեմբերի 11-13-ը Դիլիջանի համայնքի պատվիրակությունը այցելեց Վրաստանի Գուրջաանի քաղաք՝ քաղաքապետ Գիորգի Մատչավարիանիի հրավերով։ Այցի նպատակն էր համագործակցության նոր հնարավորությունների ուսումնասիրումը և համատեղ ծրագրերի մշակումը։ Պատվիրակության կազմում էին Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Վարդան Գրիգորյանը, նույն բաժնի աշխատակից Հայկ Սարգսյանը, «Դիլիջան համայնքի տրանսպորտ և լուսավորություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Էմին Մարգարյանը և Գոշ բնակավայրի վարչական ղեկավար Գևորգ Ամիրխանյանը։

Դիլիջանի համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանի գլխավորած պատվիրակությունը այցելեց Ռումինիայի Հանրապետության Ռոման քաղաք՝ 2019 թվականին ստորագրված «Քույր քաղաքներ» հուշագրի շրջանակներում համագործակցությունը զարգացնելու նպատակով։

Հոկտեմբերի 17-ին ՀՀ Էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի հետ քննարկվեց «Դիլիջանի զարգացման տեսլական» զեկույցը։

Հոկտեմբերի 18-ին Դիլիջանի համայնքի ղեկավարի խորհրդական Նոնա Գրիգորյանը մասնակցեց «Առավոտ լուսո» ծրագրին։

Հոկտեմբերի 19-ին Newmag հրատարակչությունը՝ գործարար Արտակ Շավարշի Թամամյանի աջակցությամբ, Դիլիջանի գրադարանների կենտրոնացված համակարգին նվիրեց 250 կտոր գիրք։ Միջոցառումը կայացավ Դիլիջանի մանկական երաժշտական դպրոցի դահլիճում։

Հոկտեմբերի 8-14-ը Խորվաթիայի Պորեչ քաղաքում անցկացվեց վետերանների աշխարհի առաջնությունը, որտեղ Դիլիջանի մարզահամալիրի տնօրեն և ըմբշամարտի մարզիչ Սասուն

Ղամբարյանը 35-40 տարեկանների խմբում՝ 78 կգ քաշային կարգում, դարձավ աշխարհի չեմպիոն։

Նոյեմբերի 18-ին բացվեց Ռուսական կենտրոնը՝ «Մեր ապագան» կրթամշակութային հիմնադրամի նախաձեռնությամբ։

Դեկտեմբերի 31-ին՝ Ամանորի կապակցությամբ, Դիլիջանի համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը և Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը այցելեցին Տավուշի մարզի N զորամաս և Ամանորյա նվերներ հանձնեցին համայնքի ՆՈՒՀ սաներին։

«Դիլիջանի՝ Ղազարոս Աղայանի անվան կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ

2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում Ղ. Աղայանի անվան կենտրոնական գրադարանն ունեցել է ավելի քան 5000 ընթերցող։ Քաղաքային բնակավայրում գործող էին 3 քաղաքային գրադարան-մասնաճյուղ։ Ղ. Աղայանի անվան ԿԳ-ը գործել է քաղաքի Մշակույթի պալատի շենքում, որն այն ժամանակ հիմնանորոգման աշխատանքների փուլում էր։

- Կենտրոնական գրադարան՝ Մյասնիկյան 53
- Թ1 մասնաճյուղ՝ Շահումյան 13/ա
- Թ3 մասնաճյուղ՝ Շամախյան 27/1
- Թ5 մասնաճյուղ՝ Կամո 52

Գյուղական բնակավայրերում գործել են 4 մասնաճյուղ-գրադարաններ և Խաչարձան մասնաճյուղը, որը չի գործում։

- Թեղուտ մասնաճյուղ՝ վարչական շենքի տարածք
- Հաղարծին մասնաճյուղ՝ Հաղարծնի Մշակույթի տուն, 2-րդ հարկ
- Գոշ մասնաճյուղ՝ վարչական շենքի տարածք
- Աղավնավանք մասնաճյուղ՝ վարչական շենքի տարածք
- Խաչարձան մասնաճյուղ՝ մոբայլ մանկապարտեզի շենք

Աշխատակիցների ընդհանուր թիվը 24 է, որից կենտրոնական գրադարանում՝ 14, Թ.1 մասնաճյուղում՝ 2, Թ.3 մասնաճյուղում՝ 2, Թ.5 մասնաճյուղում՝ 1, Թեղուտի մասնաճյուղում՝ 1, Հաղարծնի մասնաճյուղում՝ 2, Գոշի մասնաճյուղում՝ 1, Աղավնավանքի մասնաճյուղում՝ 1, Խաչարձան մասնաճյուղում՝ 0։

Ընդհանուր թիվը՝ 210244։ 2024 թվականին ձեռք է բերվել 16 կտոր գրականություն՝ ՀՀ Դիլիջանի համայնքապետարանի կողմից տրամադրված միջոցներով։

Ընթերցողների, հաճախումների և տացքի թվի նվազումը պայմանավորված է 2022թ.-ից ԿԳՀ կենտրոնական գրադարանի հիմնանորոգման աշխատանքներով, որի արդյունքում չի գործել ներհամակարգային աբոնեմենտը։

Գյուղական բնակավայրերի մասնաճյուղերը՝ ըստ անհրաժեշտության, համալրվել են գրադարակներով։ 2022թ.-ի նոյեմբեր ամսից մինչ օրս Դիլիջանի ԳԿՀ ՀՈԱԿ-ում իրականացվում են հիմնանորոգման աշխատանքներ։

2024 թվականի հուլիսի 24-27-ը Խնկո-Ապոր անվան ազգային մանկական գրադարանում կայացել են դասընթացներ «Ժամանակակից տեղեկատվական շտեմարանների թվայնացում գրադարաններում» թեմայով։ Մասնակից աշխատողներ՝ Արփինե Դավթյան, Սիրամարգ Մանուկյան, Մարգարիտա Գոգչյան։

Գրադարանավարի օրվան նվիրված ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից «Շնորհակալագրով» պարգևատրվել է ԿԳ-ի ավագ խմբագիր Էդիտա Մնացականյանը։

Միջոցառումներ

1. Պարույր Սևակ - 100 - «Դարի զավակը»
2. Ակսել Բակունց - 125 - «Մթնաձորի երգիչը»
3. Հովհաննես Շիրազ - 110 - «Շիրազի ֆենոմենը»
4. Հովհաննես Թումանյան - 155- Հոբելյանական միջոցառումների շարք բոլոր մասնաճյուղերում
5. Կոմիտաս 155 - «Նրանք ծնվեցին, որ մենք վերածնվենք»
6. Եվրոպական ժառանգության օրեր
7. Աստրիդ Լինդգրեն - «Երկարագուլպա Պեպին» գրքի քննարկում
8. Սենտ Էքզյուպերի - «Փոքրիկ իշխանը» գրքի քննարկում
9. Շարլ Պերրո - «Կարմիր Գլխարկը» հեքիաթի բեմականացում
10. «Եվրոպա աշխարհամաս»-ը՝ նրա երկրների մշակութային ժառանգության մասին հետաքրքիր տեղեկություններ
11. Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օր
12. ՀՀ Անկախության օր՝ « Մեր անկախության դժվարին ուղին»
13. Գրադարանավարի օր – Թ.4 հիմնական դպրոցի աշակերտների այց գրադարան
14. Մայրենի լեզվի օր
15. Թանգարանների միջազգային օր – Թեղուտի միջնակարգ դպրոցի աշակերտների այց Երկրագիտական թանգարան
16. Գիրք նվիրելու օր
17. Խաչատուր Աբովյան - 215 – մի շարք ճանաչողական միջոցառումներ ԳԿՀ ՀՈԱԿ մասնաճյուղերում
18. Ամանորի տոներին նվիրված զրույց-քննարկումներ

Միջոցառումները կայացել են բացառապես մասնաճյուղերում, ցուցահանդեսների, ընթերցողների մասնակցությամբ և ֆիլմերի դիտումներով: Միջոցառումների մասնակից հիմնական կողմերն են աշակերտները և նախադպրոցական ուսումնական հաստատությունների ավագ խմբերի սաները:

«Դիլիջան մարզահամալիր» ՀՈԱԿ

2024 թվականին «Դիլիջանի մարզահամալիր» ՀՈԱԿ-ի հիմնական կառուցվածքը ներառել է 8 մարզաձև՝ ֆուտբոլ, բռնցքամարտ, ուժային եռամարտ, շախմատ, սեղանի թենիս, բազկամարտ, մարմնամարզություն և հունահռոմեական ըմբշամարտ: Մարզահամալիրում մարզվող սաների ընդհանուր թիվը կազմել է 292, որոնցից 77-ը աղջիկներ են, 215-ը՝ տղաներ: Տարվա ընթացքում 80 սան ավարտել է մարզումները, որից 14-ը՝ աղջիկ, 66-ը՝ տղա, իսկ նոր ընդունված սաների թիվը կազմել է 130, որոնցից 23-ը աղջիկներ են, 107-ը՝ տղաներ: Մարզիչ-մանկավարժական խորհուրդը անցկացրել է նիստ 2024 թվականի սեպտեմբերի 5-ին:

Տարվա ընթացքում մարզահամալիրի մարզադահլիճում և մարզադաշտերում կազմակերպվել են մի շարք մրցաշարեր: Մարտի 20-ին տեղի է ունեցել «ROCKING DILIJAN» հունահռոմեական ըմբշամարտի ամենամյա բաց առաջնությունը, որին մասնակցել է 200 սան: Ապրիլի 8-9-ին անցկացվել է «ՀՀ Վարչապետի Գավաթ» սիրողական սեղանի թենիսի համայնքային փուլի մրցաշարը՝ 20 մասնակցով: Մարտի 1-2-ին անցկացվել է սեղանի թենիսի կադետների և կրտսեր կադետների Տավուշի մարզի առաջնությունը, որին մասնակցել է 60 սան:

Մայիսի 25-ին կազմակերպվել է շախմատի բաց առաջնություն, որին մասնակցել է 30 սան: Սեպտեմբերի 29-ին Դիլիջանի քաղաքային մարզադաշտում անցկացվել է ֆուտբոլային ընկերական հանդիպում՝ 2 թիմի մասնակցությամբ, իսկ հոկտեմբերի 20-ին Մ12 ֆուտբոլային

հանդիպմանը մասնակցել է 3 թիմ։ Դեկտեմբերի 8-ին մարզահամալիրում տեղի է ունեցել հունահռոմեական ըմբշամարտի Դիլիջանի ամենամյա բաց առաջնությունը, որին մասնակցել է 250 սան։

Մարզահամալիրի սաները տարվա ընթացքում մասնակցել են բազմաթիվ հանրապետական և միջազգային առաջնությունների՝ արձանագրելով նշանակալի հաջողություններ։ Հունվարի 26-28-ին Վաղարշապատում մասնակցել են հունահռոմեական ոճի ըմբշամարտի բաց առաջնությանը՝ նվիրված Հայոց բանակի կազմավորման 32-րդ տարեդարձին, որի շրջանակում հանդես է եկել 15 թիմ՝ 200 մասնակիցներով։ Ապրիլի 28-ին Երևանում մասնակցել են բազկամարտի ՀՀ մեծահասակների և պատանիների առաջնությանը, որին մասնակցել է 1200 մարզիկ։ Մայիսի 1-17-ը բռնցքամարտի կրտսեր պատանիների ՀՀ առաջնությանը մասնակցել է 250 մարզիկ։

Մայիսի 17-ին Իջևանում անցկացվել է ֆուտբոլի Տավուշի մարզի առաջնությունը՝ նվիրված Գրիգոր Մինասյանի 70-ամյակին։ Հունիսի 3-ին Երևանում տեղի է ունեցել «Բեռնուր Փաշայանի անվան հունահռոմեական ըմբշամարտի միջազգային» մրցաշարը՝ 150 մարզիկների մասնակցությամբ։ Հուլիսի 15-ին Բագրատաշենում մասնակցել են Բագրատ Վարդանյանին նվիրված հուշամրցաշարին՝ 120 մասնակիցներով։

Սեպտեմբերի 26-ին Սևանում անցկացվել է ՀՀ անկախության տոնին նվիրված ուժային եռամարտի բաց առաջնությունը՝ 250 մարզիկների մասնակցությամբ։ Հոկտեմբերի 8-13-ը Խորվաթիայում տեղի է ունեցել հունահռոմեական ըմբշամարտի վետերանների աշխարհի առաջնությունը։ Հոկտեմբերի 2-4-ին Երևանում անցկացվել է ԽՍՀՄ և ՀՀ վաստակավոր մարզիչներ Հ. Խաչատրյանի և Ա. Մնացականյանի անվան միջազգային մրցաշարը, որին մասնակցել է 280 մարզիկ։

Նոյեմբերի 2-3-ին Վաղարշապատում տեղի է ունեցել ՀՀ վաստակավոր մարզիչ Սարիբեկ Պողոսյանին նվիրված հունահռոմեական ըմբշամարտի մրցաշարը, որին մասնակցել է 165 մարզիկ։ Նոյեմբերի 10-ին Գետահովիտում և նոյեմբերի 17-ին Վանաձորում անցկացվել են ֆուտբոլային ընկերական հանդիպումներ՝ 2 թիմերի մասնակցությամբ։ Նոյեմբերի 16-ին Երևանում տեղի են ունեցել սեղանի թենիսի հանրապետական եզրափակիչ մրցումները։

Նոյեմբերի 23-25-ին Բաթումիում անցկացվել է հունահռոմեական ըմբշամարտի միջազգային մրցաշարը՝ 200 մարզիկների մասնակցությամբ։ Նոյեմբերի 25-26-ին Իջևանում տեղի է ունեցել շախմատի 4-րդ կարգի որակավորման մրցաշարը՝ 11 մասնակիցներով։ Նոյեմբերի 26-ից դեկտեմբերի 1-ը Երևանում անցկացվել է բռնցքամարտի միջազգային մրցաշարը՝ 200 մարզիկների մասնակցությամբ։ Նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 1-ը Գյումրիում տեղի է ունեցել հունահռոմեական ըմբշամարտի դեռահասների բաց առաջնությունը՝ 12 մասնակիցներով։

2023 թվականին «Դիլիջան մարզահամալիր» ՀՈԱԿ-ը հիմնովին նորոգվել է։ 2024 թվականին ՀՀ ԿԳՄՄՆ-ի կողմից ձեռք են բերվել 10 հատ շախմատի խաղաքար, 20 հատ ֆուտբոլի գնդակ, 2 հատ բասկետբոլի գնդակ, 2 լրակազմ սեղանի թենիսի սեղաններ, 5 հատ շախմատի ժամացույց, 1 լրակազմ բռնցքամարտի ռինգ, 2 հատ մագլցման պարան, 2 զույգ մինի ֆուտբոլի ցանց, 2 հատ վոլեյբոլի գնդակ։

«Դիլիջանի մշակույթի պալատ» ՀՈԱԿ

2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում Դիլիջանի մշակույթի պալատի վերահսկողությամբ են գործել Շամախյան 27 և Կամո 52 հասցեներում գործող ակումբների շենքերը։ 2024 թվականին հաստատված դրույքների թիվը 12.5 է, աշխատակիցների թիվն ընդհանուր՝ 13։

Հաշվետու ժամանակահատվածում մշակույթի պալատի աշխատակիցներն ապահովել են մի շարք միջոցառումների տեխսպասարկումը, ինչպիսիք են ձմեռային և ամառային զորակոչերը,

Եղեռնի օրվան նվիրված միջոցառումը, Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառումը, ռուս-արտասահմանյան պոեզիայի թեմայով կազմակերպված միջոցառումը, «Բարի գալուստ ամառ-2024» երաժշտական փառատոնը, «Նարեկ» արգենտինահայ ժողովրդական պարի համույթի համերգը, ՀՀ Անկախության օրվա առթիվ կազմակերպված միջոցառումը և պետական դրոշի բարձրացման արարողությունը, ինչպես նաև Հայաստանի Առաջին Հանրապետության 106-ամյակին նվիրված միջոցառումը, որտեղ ելույթ է ունեցել նաև մշակույթի պալատի փողային նվագախումբը: Նվագախումբը մասնակցել է «Փողային նվագախմբի հանրապետական 17-րդ փառատոն»-ին՝ արժանանալով դիպլոմի:

«Դիլիջանի երկրագիտական թանգարան–պատկերասրահ» ՀՈԱԿ

2024 թվականին Դիլիջանի երկրագիտական թանգարան-պատկերասրահում իրականացվել են մի շարք կարևոր նախաձեռնություններ:

Հունվարի 28-ին՝ Հայոց բանակի 32-ամյակի օրը, թանգարան-պատկերասրահը կազմակերպել է զինվորականների և նրանց ընտանիքների անդամների անվճար այցելություն՝ համագործակցելով զորամասի հրամանատարության հետ:

Ապրիլի 24-ին թանգարանում անցկացվել է լուսանկարների ցուցահանդես՝ տրամադրված ՀՀ ազգային արխիվից, որը նվիրված էր Հայոց ցեղասպանությանը, ինչպես նաև կամերային երաժշտության համերգ՝ ցեղասպանության տարելիցի հիշատակին:

Մայիսի 18-ին նշվել է «Թանգարանների միջազգային օրը» և «Թանգարանային գիշերը»՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից առաջարկված թեմայով:

Մայիսի 25-ին բացվել է UWC Դիլիջանի միջազգային քոլեջի գեղագիտության դասախոս Յարոսլավ Զաբավսկու «Կերամիկական աշխատանքների» անհատական ցուցահանդեսը:

Տարվա ընթացքում ժամանակակից արվեստի սրահում ներկայացվել են 2019-2024 թթ. թանգարանին նվիրաբերված կերպարվեստի գործերի ցուցահանդես:

Ամառային ամիսներին՝ այցելուների սպասարկումն ու ֆինանսական մուտքերը բարելավելու նպատակով, թանգարան-պատկերասրահի աշխատանքը կազմակերպվել է հերթափոխով՝ ժամը 10:00-ից մինչև 21:00-ն, ներառելով նաև տոնական և հիշատակի օրերը: Կազմակերպվել են կիրառական արվեստի ցուցանմուշների բացօթյա ցուցադրություններ, ինչպես նաև երեկոյան ժամերին՝ ֆիլմերի ցուցադրություններ, այդ թվում՝ «Հ. Այվազովսկի», «Ռիշար Ժերանյան», «Հայկական Նավասարդ», «Դեպի 21-րդ դար Թերեզա Գրիգորյան» ֆիլմերը:

Օգոստոսի 17-ին նշվել է թանգարան-պատկերասրահի հիմնադիր, ՀՀ վաստակավոր նկարիչ Հովհաննես (Վանիկ) Շարամբեյանի 98-ամյակը՝ հատուկ ցուցահանդեսով:

Տարվա ընթացքում տպագրվել են գովազդային թռուցիկներ և տրամադրվել համայնքում գործող հանգստյան տներին, հյուրատներին, հյուրանոցներին և առողջարաններին: Պլանավորվել է նաև գովազդային վահանակների տեղադրում քաղաքի տարբեր հատվածներում:

Սեպտեմբերի 14-ին՝ Երևանի Ռուսական արվեստի թանգարանի հետ համագործակցությամբ, Երևանում կազմակերպվել է Դիլիջանի թանգարանի ֆոնդերում պահպանվող արտասահմանյան գրաֆիկական աշխատանքների ցուցահանդես, որի շրջանակավորումն իրականացվել է Ռուսական արվեստի թանգարանի կողմից:

Սեպտեմբերի 14-ին՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության նախաձեռնությամբ, թանգարանում անցկացվել է «Կրթամշակութային ԷՔՍՊՈ 2024» միջոցառումը, որին մասնակցել են Տավուշի մարզի մշակութային և կրթական հաստատությունների ներկայացուցիչները, Վանաձորի Հ.

Աբելյանի անվան դրամատիկական թատրոնի և «Մխիթար Գոշ» կրթամշակութային կենտրոնի ներկայացուցիչները։

Հոկտեմբերի 5-ին՝ Դիլիջան քաղաքի 480-ամյակի տոնակատարության շրջանակում, թանգարան-պատկերասրահում բացվել է լուսանկարիչ Քսենյա Յակուտովիչի «Դիլիջանյան դիմանկարներ» լուսանկարչական ցուցահանդեսը, որը շարունակվել է մինչև նոյեմբերի 15-ը։

Նոյեմբերի 3-ին՝ թանգարան-դպրոց համագործակցության շրջանակում, ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտները թանգարանում իրականացրել են նախագծային ծրագիր՝ թանգարանի գիտաշխատողի ղեկավարությամբ ուսումնասիրելով կիրառական արվեստի գործվածքների տեխնիկաները, ներառյալ գորգագործություն, ժանյակագործություն և ասեղնագործություն։

Նոյեմբերի 7-ին՝ Կոտայքի մարզի Փյունիկ գյուղի դպրոցականները նկարների և ճեպանկարների միջոցով ներկայացրել են թանգարանում ցուցադրված հեղինակների աշխատանքները՝ իրենց պատկերացմամբ և մեկնաբանությամբ։

Նոյեմբերի 22-ին բացվել է հայ և արտասահմանցի նկարիչների 26 գրաֆիկական աշխատանքների նոր ցուցադրություն։

Տարվա ընթացքում դիմում է ներկայացվել ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը՝ դրամաշնորհի աջակցությամբ Այվազովսկու «Ծովային տեսարան» կտավի անիմացիոն տարբերակի ստեղծման համար, ինչը կնպաստի այցելուների թվի աճին և ապահովի հավելյալ եկամուտներ։

2024 թվականին թանգարան-պատկերասրահը ձեռք է բերել ծալվող աստիճան (120,000 դրամ), փոշեկուլ (34,000 դրամ) և գովազդային վահանակներ (35,760 դրամ)։

Համեմատության համար՝ 2023 թվականին վաճառված տոմսերի ընդհանուր գումարը կազմել է 8,442,000 դրամ, մինչդեռ 2024 թվականին այն կազմել է 8,297,000 դրամ։ Դպրոցական աբոնեմենտների վաճառքից ստացված գումարը 2023 թվականին եղել է 540,300 դրամ, իսկ 2024 թվականին՝ 297,900 դրամ (3-րդ և 4-րդ եռամսյակների համար նախատեսված 175,200 դրամը դեռևս չի փոխանցվել)։

Թանգարանի ֆոնդերի ընդհանուր քանակը 2023 թվականին կազմել է 5,298 թանգարանային առարկա, իսկ 2024 թվականին ավելացել է ևս 10 թանգարանային առարկա, ներառյալ Հայրենական մեծ պատերազմի վետերան Գուրգեն Ավետիսյանի թվով 15 մեդալ և 20 փաստաթուղթ։

Հաստիքացուցակը 2023 և 2024 թվականներին պահպանվել է նույնը՝ 18 աշխատակից։

«Դիլիջանի մանկական երաժշտական դպրոց» ՀՈԱԿ

2024 թվականին «Դիլիջանի մանկական երաժշտական դպրոց» ՀՈԱԿ–ւ իրականացրել է մի շարք կրթական և մշակութային միջոցառումներ, ինչպես նաև բարելավել է իր նյութատեխնիկական հագեցվածությունը։

Դպրոցի մասնաճյուղերն գործել են Հաղարծին և Խաչարձան գյուղական բնակավայրերում։ Տարվա ընթացքում հաստատված դրույքների թիվը կազմել է 35.1, աշխատակիցների ընդհանուր թիվը՝ 37, որոնցից 4-ը եղել են կենսաթոշակառուներ, 27-ը՝ մանկավարժներ։ Դաշնամուրի մասնագիտությամբ դասավանդել են 13 մանկավարժ, լարային գործիքների՝ 3, տեսական առարկաների՝ 2, ժողովրդական գործիքների՝ 8, այդ թվում՝ քանոն՝ 3, դուդուկ և շվի՝ 3, դհոլ՝ 2, վոկալ՝ 1, երգչախումբ՝ 1։

Արտադպրոցական ծրագրեր իրականացնող մանկավարժական աշխատողների կամավոր ատեստավորմանը մասնակցել են 6 ուսուցիչ, որոնցից Թամարա Քեռյանը՝ 86.7%, Մետաքսյա Բաղմանյանը՝ 73.3%, Աննա Սարգսյանը՝ 66.7%, Քրիստինա Սահակյանը՝ 60%, Դավիթ Մարտիրոսյանը՝ 50%, իսկ Սասուն Մարտիրոսյանը՝ 48.3% արդյունք են գրանցել։

Ատեստավորման արդյունքում Թամարա Քեռյանը և Մետաքսյա Բաղմանյանը ստացել են աշխատավարձի բարձրացում: Թամարա Քեռյանը տարվա ընթացքում արժանացել է Տավուշի մարզպետի շնորհակալագրի:

2024-2025 ուսումնական տարում դպրոցում սովորել է 150 աշակերտ: Դասընթացները բաժանվել են ըստ բաժինների՝ դաշնամուրային բաժնում՝ 55, լարային բաժնում՝ 11, վոկալ բաժնում՝ 8, ժողովրդական գործիքների բաժնում՝ 76: Աշակերտների թվաքանակը Դիլիջանում կազմել է 69, Հաղարծինում՝ 77, Խաչարձանում՝ 4:

Տարվա ընթացքում դպրոցում երեք անգամ անցկացվել են վարպետության դասեր, որոնցից երկուսը վարել է Տավուշի մարզի մեթոդիստ-համակարգող Հասմիկ Մկրտումյանը, իսկ մեկը՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դոցենտ-դաշնակահար Գոհար Զալինյանը:

Պետական բյուջեից ուսման վարձի փոխհատուցման համար տրամադրվել է 2,832,500 դրամ: Տարվա ընթացքում ձեռք է բերվել Canon Pixma MG2545 բազմաֆունկցիոնալ տպիչ սարք, իսկ հոկտեմբերին «ԻՄ ՔԱՅԼԸ» հիմնադրամի կողմից նվիրաբերվել են երաժշտական գործիքներ՝ թմբուկներ, սինթեզատոր, բարձրախոսներ, շեփորներ:

Դպրոցի տանիքի մասնակի ջերմամեկուսացման աշխատանքների համար ծախսվել է 320,000 դրամ, որը ֆինանսավորվել է Դիլիջանի համայնքապետարանի կողմից:

Տարվա ընթացքում տեղի են ունեցել ծնողական ժողովներ (Դիլիջանում՝ 2, Հաղարծինում՝ 2, Խաչարձանում՝ 1), մանկավարժական խորհրդի նիստեր՝ 2, դասալսումներ (Դիլիջանում՝ 12, Հաղարծինում՝ 9, Խաչարձանում՝ 4) և դասարանային համերգներ (Դիլիջանում՝ 10, Հաղարծինում՝ 8, Խաչարձանում՝ 2):

2024 թվականին կազմակերպվել են մի շարք միջոցառումներ, այդ թվում՝

- հունվարի 22-ին՝ միջոցառում՝ նվիրված Առնո Բաբաջանյանի ծննդյան տարելիցին,
- հունվարի 27-ին՝ միջոցառում՝ նվիրված Տիգրան Մանսուրյանի ծննդյան օրվան,
- հունվարի 29-ին՝ Հայոց բանակի օրվան նվիրված միջոցառում,
- փետրվարի 22-ին՝ համերգ՝ նվիրված Շոպենի ծննդյան տարելիցին,
- մարտի 7-ին՝ համերգ՝ նվիրված Կանանց միջազգային օրվան,
- ապրիլի 24-ին՝ միջոցառում՝ նվիրված Եղեռնի զոհերի հիշատակին,
- մայիսի 28-ին՝ միջոցառում՝ նվիրված Հայաստանի Առաջին Հանրապետության 106-ամյակին,
- հունիսի 7-ին՝ 2023-2024 ուսումնական տարվա հաշվետու համերգ:

Բացի այդ, դպրոցի աշակերտները մասնակցել են տարբեր մրցույթների և փառատոների՝ գրանցելով հաջողություններ «Սեդֆեստ» միջազգային 4-րդ փառատոնում, «ԱրտՄյուզիք» 15-րդ միջազգային մրցույթ-փառատոնում, ինչպես նաև «Փոքրիկ Քայլ» երաժիշտ-կատարողների միջազգային մրցույթ-փառատոնում:

Տարվա ընթացքում դպրոցը շարունակել է իր կրթական և մշակութային գործունեությունը՝ ապահովելով աշակերտների մասնագիտական աճն ու ներգրավվածությունը մշակութային կյանքում:

«Դիլիջանի Հովհաննես Շարամբեյանի անվան մանկական գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ

2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում Հովհ. Շարամբեյանի անվան մանկական գեղարվեստի դպրոցը գրանցել է բազմաթիվ հաջողություններ, մասնակցել տեղական, հանրապետական և միջազգային բազմաթիվ մրցույթների, փառատոների:

Գեղարվեստի դպրոցի կերպարվեստի բաժնի 42 աշակերտների 42 ստեղծագործական աշխատանքներն էլեկտրոնային տարբերակով ուղարկվել է ք. Մոսկվա՝ մասնակցելու «Սլավոնական զարդանախշեր» միջազգային մրցույթ փառատոնին:

Փետրվարի 19 -ին 98 աշակերտների, 100 ստեղծագործական աշխատանքներ ուղղարկվել է մասնակցելու Չեխիայում կայանալիք, ամենամյա Լիդիցե 52-րդ միջազգային «Քարավան» թեմայով նկարչական և դեկորատիվ - կիրառական արվեստի մրցույթ - փառատոնին: Արդյունքում՝ 5 աշակերտներ արժանացել են միջազգային դիպլոմների: Իսկ դպրոցը, լավագույն գրաֆիկական և գեղանկարչական աշխատանքների հավաքածու ներկայացնելու համար, արժանացել է՝ «Վարդ» մեդալի:

Մարտի 2-ին գեղարվեստի դպրոցի կերպարվեստի բաժնի 44 աշակերտների՝ 45 ստեղծագործական աշխատանքներն էլեկտրոնային տարբերակով ուղարկվել է ք. Մոսկվա՝ մասնակցելու «Թեմատիկ նատյուրմորտ» միջազգային մրցույթ փառատոնին, որի արդյունքում ներքոնշյալ աշակերտներն արժանացել են մրցանակային տեղերի:

Մարտի 13-ին գեղարվեստի դպրոցի կերպարվեստի բաժնի 10 աշակերտների՝ 10 ստեղծագործական աշխատանքներն էլեկտրոնային տարբերակով ուղարկվել է ք. Մոսկվա՝ մասնակցելու «Իմ աշխարհը և ես» միջազգային մրցույթ փառատոնին:

Մարտի 27-ին գեղարվեստի դպրոցի կերպարվեստի բաժնի 73 աշակերտների՝ 73 ստեղծագործական աշխատանքներն էլեկտրոնային տարբերակով ուղարկվել է՝ Իրանի Իսլամական Հանրապետություն, մասնակցելու ք. Սպահանում՝ կայանալիք «Իմ քաղաքի գեղատեսիլ վայրերը» միջազգային մրցույթ փառատոնին:

Մարտի 30-ին Երևանում «Մինորա» մշակութային կենտրոնի կողմից կազմակերպված «Նազանք» բազմառճ պարերի հանրապետական մրցույթ-փառատոնին, 3 տարբեր տարիքային խմբերով և 11 պարային կատարումներով, ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին նաև գեղարվեստի դպրոցի պարարվեստի բաժնի «Դիլիջան» և «Հաղարծին» պարային խմբերի աշակերտները: Փառատոնին փայլուն մասնակցություն ցուցաբերելու համար բոլոր մասնակիցներն արժանացել են դիպլոմների և մեդալների, պարուսույցները՝ պարգևատրվել են պատվոգրերով, իսկ դպրոցն արժանացել է՝ պատվոգրի և հուշանվերի:

Ապրիլի 4-ին Երևանում «Ծիծեռնակաբերդի» թանգարանում, Հայաստանի հանրապետությունում Չեխիայի Հանրապետության Արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. պարոն Պետր Պիրունչիկի կողմից հանձնվեցին «Լիդիցե 51-րդ» նկարչական և դեկորատիվ կիրառական արվեստի միջազգային մրցույթից ստացված մրցանակները:

Ապրիլի-4 ին՝ «Դիլիջան ՋԻՄ» մարզական ակումբի կողմից կազմակերպած միջոցառմանը մասնակցություն ունեցան գեղարվեստի դպրոցի կերպարվեստի բաժնի 4 աշակերտներ, որտեղ ներկայացվել է նաև դպրոցի 2023-2024 ուսումնական տարում լավագույն արդյունքներ ցուցաբերած աշակերտների տվյալները: Արդյունքում՝ «ՄԻՇՆ ու ԼՅՈՎԸ մեր գլխից ՎԵՐ» խորագիրը կրող պատվոգրերով և դրամական պարգևներով պարգևատրվել են բազմաթիվ աշակերտներ:

Մայիսի 10-ին գեղարվեստի դպրոցի կերպարվեստի բաժնի 56 աշակերտների՝ 56 ստեղծագործական աշխատանքներ ուղարկվել է Երևանում «Արհեստագործների միություն» մշակութային հիմնադրամի կողմից կազմակերպված «Խաղաղություն» մանկապատանեական նկարչական մրցույթ փատատոնի առաջին փուլին մասնակցելու, որի արդյունքում 4 աշակերտներ, անցնելով 2-րդ փուլ, արժանացել են նվերների և պատվոգրերի:

Մայիսի 12-ին Գյումրում «Շիրակի էսքիզներ 2024» բազմառճ պարերի հանրապետական մրցույթ-փառատոնին, 2 տարբեր տարիքային խմբերով և 4 պարային կատարումներով, ակտիվ մասնակցություն են ցուցաբերել գեղարվեստի դպրոցի պարարվեստի բաժնի՝ «Դիլիջան» և «Հաղարծին» պարային խմբերը: Արդյունքում «Դիլիջան» պարային խմբի աշակերտներն արժանացել են՝ 1 հատ 3-րդ պատվավոր տեղի, «Հաղարծին» պարային խմբի աշակերտները՝ մասնակցության վկայականների:

Մայիսի 13-ին գեղարվեստի դպրոցի կերպարվեստի բաժնի 55 աշակերտների՝ 55 ստեղծագործական աշխատանքներն ուղարկվել է Լեհաստանի Հանրապետության, Տորուն քաղաք, մասնակցելու՝ «Միշտ կանանչ, միշտ կապույտ» 22-րդ մանկապատանեական միջազգային մրցույթ փառատոնին:

Մայիսի 13-ին գեղարվեստի դպրոցի կերպարվեստի բաժնի 25 աշակերտների՝ 25 ստեղծագործական աշխատանքներն ուղարկվել է Չինաստանի հանրապետություն, «JQA international childrens drawings contest» մասնակցելու «Այն երկիրը, որ մենք կփոխանցենք ապագա » մրցույթ փառատոնին:

Մայիսի 25 և 26–ին գեղարվեստի դպրոցը ցուցահանդեսային, համերգային, պարային գեղարվեստական կատարումներով իր մասնակցությունն է ունեցել Երևանում կայացած և անկախության օրվան նվիրված՝ ՀՀ ԷՆ Զբոսաշրջության կոմիտեի կողմից կազմակերպված՝ «Ճանաչիր Հայաստանը» մարզային զբոսաշրջային ցուցահանդես-փառատոնին՝ ներկայացնելով Տավուշի մարզն ու Դիլիջան համայնքը:

Հունիսի 8-ին Երևանում «Մինորա» մշակութային կենտրոնի կողմից կազմակերպված «Նազանք 2024 » բազմառճ պարերի հանրապետական մրցույթ-փառատոնին՝ 2 տարբեր տարիքային խմբերով և 4 պարային կատարումներով, ակտիվ մասնակցություն են ցուցաբերե գեղարվեստի դպրոցի պարարվեստի բաժնի «Դիլիջան» պարային խմբի աշակերտները: Արդյունքում, «Դիլիջան» պարային խմբի աշակերտներն արժանացել են 3 հատ՝ առաջին պատվավոր տեղերի, 1 հատ՝ 2-րդ, 1հատ՝ լավագույն բեմական հագուստ մրցանակին: Բոլոր մասնակից աշակերտներն արժանացան դիպլոմների և մեդալների, պարուսույցը պարգևատրվել է պատվոգրով, իսկ դպրոցն արժանացել՝ պատվոգրի և հուշանվերի:

Հունիսի 9-ին՝ գեղարվեստի դպրոցն իրականացրել է ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի կողմից հատկացված և Դիլիջանի համայնքապետարանի միջոցով տրամադրված՝ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում «Պարատոն» խորագիրը կրող մշակութային փառատոնը: Միջոցառումն անցկացվել է Հաղարծին բնակավայրի՝ «Հաղարծին մշակույթի տանը»: Իրենց գեղեցիկ և տարաբնույթ կատարումներով մասնակցություն են ունեցել և հանդես են եկել՝ ՀՀ Տավուշի մարզի չորս տարածաշրջաններից ժամանած պարային խմբերն ու անհատ կատարողները: Գեղեցիկ կատարումներով հանդես են եկել՝ «Նավուր», «Իջևան» «Դիլիջան» և Հաղարծին» պարային խմբերը: Համերգային ծրագրի ավարտին ամփոփվել է միջոցառումն ու Տավուշի մարզպետի Աշխատակազմի, Դիլիջանի համայնքապետարանի և «Դիլիջանի Հովհաննես Շարամբեյանի անվան մանկական գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ կողմից, մասնակից երեխաներին և կազմակերպություններին փառատոնին ակտիվ մասնակցություն ցուցաբերելու համար՝ հանձնվել է մասնակցության վկայականներ, գավաթներ և խորհրդանշական հուշանվերներ:

Հունիսի 16-ին Դիլիջանում կայացած «Միմինո» հայ-վրացական մշակութային փառատոնին ակտիվ մասնակցություն է ունեցել նաև գեղարվեստի դպրոցը: Կերպարվեստի բաժինը հատկացված տաղավարում ներկայացրել է ստեղծագործական աշխատանքներով հագեցած գեղարվեստական ցուցադրություն: Ցուցադրության ավարտին՝ Լավագույն տաղավար ներկայացնելու համար, Ժյուրիի կողմից դպրոցն արժանացել է՝ արծաթե մեդալի և գոհունակության խոսքերի:

Հունիսի 29-ին՝ գեղարվեստի դպրոցն ինչպես միշտ ակտիվ մասնակցություն է ունեցել Ենոքավանում կայացած, և արդեն իսկ ամենամյա դարձած՝ «Հայ բույս 2024» փառատոնին: Կերպարվեստի բաժինը ներկայանալով գեղարվեստական ցուցադրությամբ, միևնույն ժամանակ դեկորատիվ-կիրառական արվեստի տաղավարներում կազմակերպել է նաև տարաբնույթ վարպետության դասեր:

Հունիսի 29-ին գեղարվեստի դպրոցի 19 աշակերտներ, ներկա գտնվելով Երևանում՝ «Նկարիչների միությունում» տեղի ունեցած «Տոտալ Արտ» մշակութային կենտրոնի կողմից կազմակերպված «Յունիվերս Արտ» միջազգային մրցույթ փառատոնի մրցանակաբաշխությանն ու գալա համերգին, արժանացել են մեդալների և պատվոգրերի:

Հունիսի 22-ից մինչև հունիսի 30-ը՝ Դիլիջանի պարարվեստի բաժնի թվով 18 աշակերտներ մեկնեցին Վրաստանի Հանրապետության Բաթումի քաղաք՝ մասնակցելու «WONDERLAND 2024» միջազգային-մրցույթ փառատոնին: Մրցույթ փառատոնին դպրոցն իր մասնակցությունն է ունեցել՝ կերպարվեստ և պարարվեստ անվանակարգերում, որի արդյունքում՝ «Խմբակային պար անվանակարգում» դպրոցի «Դիլիջան» պարային խումբն արժանացել է 1-ին պատվավոր մրցանակին, ստանալով նաև գավաթ, վկայականներ և հուշանվերներ, իսկ «Անհատական պար» անվանակարգում և տարբեր տարիքային խմբերում արժանացել են մեդալների և դիպլոմների:

Հուլիսի 19-ին կայացել է գեղարվեստի դպրոցի 2023-2024 ուսումնական տարվա ավարտական դասարանների տարեվերջյան հաշվետու միջոցառումն ու շրջանավարտների ավարտական ստեղծագործական աշխատանքների պաշտպանությունը, որն ուղեկցվել է փոքրիկ ցուցադրությամբ և մասնագիտական ժյուրիի գնահատմամբ:

Հուլիսի 20-ին Դիլիջանի բացօթյա Ամֆիթատրոնում կայացել է գեղարվեստի դպրոցի 2023-2024 ուսումնական տարվա հաշվետու համերգը: Միջոցառումն ավարտելով և ամփոփելով հանձնվեց նաև բոլոր շրջանավարտների ավարտական պետական վկայականները: Իսկ տարվա ընթացքում՝ լավագույն արդյունքներ ցուցաբերած աշակերտներին՝ պատվոգրեր, աշխատակիցներին և գործընկերներին՝ շնորհակալագրեր:

Օգոստոսի 17-ին Դիլիջանում կայացած և արդեն իսկ ամենամյա դարձած «Դիլի տոն 2024» փառատոնին ակտիվ մասնակցություն է ունեցել նաև գեղարվեստի դպրոցի կերպարվեստի բաժինը: Գեղարվեստական տաղավարներում ցուցադրվել է դեկորատիվ-կիրառական արվեստի ստեղծագործական նմուշներն ու միևնույն ժամանակ դպրոցի մասնագետներն իրենց հմտությունները ներկայացնելով, տեղում անցկացրել են մի քանի մասնագիտական վարպետության դասեր այցելուների համար:

Սեպտեմբերի 14-ին Դիլիջանում կայացած ամենամյա «Արվեստների և արհեստների 12-րդ» միջազգային փառատոնին, գեղարվեստի դպրոցի կերպարվեստի բաժինն ակտիվ մասնակցություն ցուցաբերելով՝ գեղարվեստական տաղավարներում ներկայացնել է դեկորատիվ-կիրառական արվեստի ստեղծագործական աշխատանքներ, զուգահեռաբար անցկացնելով նաև մասնագիտական վարպետության տարաբնույթ դասեր: Փառատոնի ամփոփման ժամանակ արժանանալով նաև մասնակցության վկայականների:

Սեպտեմբերի 19-ին Երևանում տեղի է ունեցել Համաշխարհային հայկական երկրորդ գագաթնաժողովը, որին մասնակցել է նաև Տավուշի մարզը ներկայացնող խումբը: Գագաթնաժողովի շրջանակներում՝ Երևանի ,,Մերիդիան,, էքսպո կենտրոնում կազմակերպվել է Հայաստանի մարզերի զարգացմանը, տնտեսական և ներդրումային հնարավորություններին նվիրված էքսպո, որին առանձին տաղավարով մասնակցել է նաև Տավուշի մարզը՝ ներկայացնելով մարզում իրականացվող ծրագրերն ու եղած հնարավորությունները, ինչպես նաև մարզային արտադրողների արտադրանքը: Գեղարվեստի դպրոցը ներկայացրել է Դիլիջան համայնքն ու գեղարվեստի դպրոցի ամբողջ գործունեությունը: Գեղարվեստական տաղավարում ցուցադրելով դեկորատիվ-կիրառական արվեստի և նկարչական ստեղծագործական ցուցանմուշ – աշխատանքներ: Միևնույն ժամանակ տաղավարում անցկացնելով բազմաթիվ հետաքրքրվողների համար՝ մասնագիտական վարպետության դասեր:

Դեկտեմբերի 2-ին՝ 96 աշակերտների, 98 ստեղծագործական աշխատանքներ ուղղարկվել է մասնակցելու Չեխիայում կայանալիք, «Լիդիցե 53-րդ» ամենամյա միջազգային նկարչական և դեկորատիվ - կիրառական արվեստի մրցույթ – փառատոնին, որի խորագիրն այս տարի կրում էր «Խաղ» թեման:

2024 թվականի ընթացքում «Դիլիջանի Հովհաննես Շարամբեյանի անվան մանկական գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ աշակերտներն ակտիվ մասնակցություն են ունեցել՝ թվով 11 միջազգային մրցույթ–փառատոների, որոնց արդյունքում՝ 48 աշակերտներ արժանացել են միջազգային դիպլոմների և մեդալների:

Գեղարվեստի դպրոցը՝

- Չեխիայի հանրապետությունում անցկացվող ամենամյա Լիդիցե 52-րդ միջազգային նկարչական և դեկորատիվ-կիրառական արվեստի մրցույթ-փառատոնին՝ լավագույն գրաֆիկական և գեղանկարչական աշխատանքների հավաքածուն ներկայացնելու համար արժանացել է՝ Վարդ միջազգային մեդալին:
- Դիլիջանում կայացած «Միմինո» հայ-վրացական մշակութային փառատոնին ակտիվ մասնակցություն ցուցաբերելու և լավագույն տաղավար ներկայացնելու համար դպրոցն արժանացել է՝ արծաթե մեդալի:
- Դիլիջանի պարարվեստի բաժնի աշակերտները Վրաստանի հանրապետության Բաթումի քաղաքում՝ մասնակցելով «WONDERLAND 2024» միջազգային-մրցույթ փառատոնին, լավագույն բեմադրություններ ներկայացնելու համար արժանացել են՝ «Ոսկե» մեդալի և վկայականի:

Դպրոցի աշակերտների ընդհանուր թիվը տարեվերջի դրությամբ կազմել է՝ 400 աշակերտ, որից՝ կերպարվեստի բաժնում սովորում է՝ 267 աշակերտ, իսկ պարարվեստի բաժնում 133 աշակերտ: Աշակերտների շարժն ըստ բանակավայրերի՝ Դիլիջան քաղաք - 299 աշակերտ, գյուղական բնակավայրեր / Թեղուտ և Հաղարծին/ - 101 աշակերտ:

Նախադպրոցական ուսումնական հաստատություններ

2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում Դիլիջան համայնքում համայնքային ենթակայությամբ գործող նախադպրոցական ուսումնական հաստատությունների ընդհանուր թիվը 11-ն է, որից 6-ը քաղաքային, իսկ 5-ը գյուղական բնակավայրերում, որից 3-ը համարվում են մոբայլ մանկապարտեզներ, 1-ը՝ այլընտրանքային ծառայություններ իրականացնող նախադպրոցական ուսումնական հաստատություն, դրանք են.

1. «Դիլիջանի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ
2. «Դիլիջանի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ
3. «Դիլիջանի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ
4. «Դիլիջանի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ
5. «Դիլիջանի թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ
6. «Դիլիջանի թիվ 6 մանկապարտեզ» ՀՈԱԿ
7. «Թեղուտի մանկապարտեզ» ՀՈԱԿ
8. «Հաղարծնի մանկապարտեզ» ՀՈԱԿ
9. Հովք գյուղական բնակավայրի մոբայլ մանկապարտեզ
10. Խաչարձան գյուղական բնակավայրի մոբայլ մանկապարտեզ
11. Աղավնավանք գյուղական բնակավայրի այլընտրանքային ծառայություններ մատուցող հաստատություններ

- 2024 թվականին 11 հաստատությունների աշխատողների ընդհանուր թիվը կազմել է 194: Նոր ընդունված աշխատակիցների թիվը՝ 20, որից 8-ը եղել են փոխարինող աշխատակիցներ, կենսաթոշակային տարիքի աշխատակիցների թիվը՝ 21:
- 2024 թվականին ՆՈՒՀ հաճախող սաների ընդհանուր թիվը կազմել է՝ 689, ինչը 2023 թվականի համեմատությամբ աճել է 19 սանի հաճախելիությամբ:
- 11 հաստատություններում կայացել է մանկավարժական խորհրդի ընդհանուր թվով 35 նիստ:
- 2024 թվականի ընթացքում կայացել են 61 ծնողական ժողովներ, որից 23-ը եղել են ծնողավարման հմտությունների հանդիպումներ:

• 2024 թվականին վարձավճարի արժեքը կազմել է 5000 ՀՀ դրամ քաղաքային և գյուղական բնակավայրերում: Հովք, Խաչարձան, Աղավնավանք գյուղական բնակավայրերում՝ անվճար:

2024 թվականին ՆՈՒՀ մանկավարժական 8 աշխատողներ դիմել են կամավոր ատեստավորման մասնակցելու համար: Ատեստավորումը կկայանա 2025 թվականին:

• 2024 թվականից «Դիլիջանի թիվ 5 մանկապարտեզ» և «Դիլիջանի թիվ 6 մանկապարտեզ», «Հաղարծնի մանկապարտեզ», «Թեղուտի մանկապարտեզ» ՀՈԱԿ–ները գործում են ՀՀ ԿԳՄՄՆ և ԿԶՆԱԿ–ի կողմից գործարկվող նախադպրոցական կրթության պետական կրթական նոր չափորոշչով: Համայնքի բոլոր 8 ՆՈՒ հաստատությունները անցել են նախադպրոցական կրթության պետական կրթական նոր չափորոշչի:

• Լիցենզիայի ներդիրի փոփոխություն. «Թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ 1 միջին և 1 ավագ խմբերի վերափոխում՝ 1 տարատարիք՝ 2-3 տարեկան, 1 տարատարիք 4-6 տարեկան:

• «Թեղուտի մանկապարտեզ» ՀՈԱԿ՝ կրտսեր 2-րդ և միջին խմբերը վերափոխվել է ավագ խումբ և տարատարիք խումբ:

• «Հաղարծնի մանկապարտեզ» ՀՈԱԿ միջին խումբ, ավագ Ա և ավագ Բ խմբեր

• ՀՀ Կառավարության 15 հուլ;իսի 2021 թվականի N 1169-Ն Որոշման համաձայն զինծառայողների սաների և ներառական սաների համար տրամադրվել է ընդհանուր թվով 7.774.293 ՀՀ դրամ դրամաշնորհ:

Ձեռքբերված գույք

• «Դիլիջանի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ ՝ ջեռուցման կաթսա, գազի վթարային սարքեր, տեսախցիկներ

• «Դիլիջանի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ՝ միկրոալիքային վառարան, խաղալիքների պահարան, վթարային անջատիչներ, սառնարան

• «Դիլիջանի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ՝ անկողնային պարագաներ, խոհանոցի պահարան, գրենական պահարան, հագուստի պահարան, գազօջախ, սառնարան, խոհանոցային պարագաներ, գրասեղան, պրոյեկտոր

• «Դիլիջանի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ՝ գազօջախ, սառնարան, լվացարան, համակարգիչ, սպիչ սարք, բարձրախոս, լամինացիայի սարք և մանկական դիդակտիկ և սպորտային պարագաներ:

• «Դիլիջանի թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ՝ մոնիտոր, բազմաֆունկցիոնալ տպիչ, ստեղնաշար, հովացուցիչ

• «Դիլիջանի թիվ 6 մանկապարտեզ» ՀՈԱԿ՝ համակարգիչ, մոնիտոր, օդաքարշ պահարան, էլեկտրական ջեռոց, անկողնային պարագաներ, սառնարան, գորգ:

• «Թեղուտի մանկապարտեզ» ՀՈԱԿ՝ սառնարան 1 հատ, գազօջախ՝ 1 հատ:

• «Հաղարծնի մանկապարտեզ» ՀՈԱԿ՝ մանկական աթոռներ՝ 30 հատ, համակարգչի աթոռ, խոհանոցային պարագաներ, վարագույր, ծածկոցներ, ամանորյա զարդարանքի պարագաներ, ջրատաքացուցիչ, էլեկտրական տաքացուցիչ:

Բոլոր նախադպրոցական ուսումնական հաստատություններում կայացել են ուսումնական պլանին համապատասխան կիսամյակային և տարեվերջյան հաշվետու հանդեսներ, ինչպես նաև միջոցառումներ են կազմակերպվել ինչպես պետական, այնպես էլ եկեղեցական, ծիսական տոներին նվիրված:

Էքսկուրսիաներ՝ 112
Արշավներ՝ 72
Մարզատոներ՝ 17
Հանդեսներ՝ 74
Ուսումնական վարժանքներ՝ 8
Մշակութային այցեր՝ 56

ՀՀ Դիլիջանի համայնքապետարանի կողմից տարեվերջյան ամանորյա նվերներ հաստատություն հաճախող բոլոր սաներին:

Վերապատրաստումներ/դասընթացներ

Մանկավարժական աշխատողների ընդհանուր թիվը՝ 96:

Հաստատությունների մանկավարժական աշխատողների թվի 5%-ը մասնակցել է մանկավարժական աշխատողների պարտադիր վերապատրաստմանը:

Վերապատրաստումը վճարովի ծառայություն է: Վերապատրաստված մանկավարժների ընդհանուր թիվը 10–ն է, վերապատրաստման ընդհանուր արժեքը 240.000 ՀՀ դրամ, ինչն էլ վճարվել է ՀՀ Կառավարության կողմից:

- «Հույսի կամուրջ»՝ Ներառական և հավասարապես որակյալ կրթություն բոլորի համար՝ հոգեբաններ, մեթոդիստներ, տնօրեններ
- «Հույսի կամուրջ» ՀԿ՝ Զարգացնող խաղեր և մեթոդիկաներ, բոլոր հաստատությունների մանկավարժներ:
- «ԿԶՆԱԿ» հիմնադրամ՝ Օգստոսյան խորհրդացություն՝ տնօրեններ, մեթոդիստներ
- «Հույսի կամուրջ» ՀԿ՝ «Կրթության և զարգացման կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները ՆՈՒՀ–ում», մանկավարժներ
- «Հույսի կամուրջ» ՀԿ՝ «Երեխաների հանդեպ բռնության կանխարգելում և արձագանքում» – մանկավարժներ
- «Արտակարգ ալիք» տեղեկատվական ՀԿ, «Տավուշի մարզին սպառնացող արտակարգ իրավիճակները, դրանց կանխարգելումն ու կառավարումը»– մեթոդիստներ:
- «Միջազգային կարմիր խաչ» Կոմիտե
- Մասնագիտական կարողությունների ձեռքբերման նպատակով հաստատությունների պարուսույցները, ֆիզիրահանգիչները և բուժքույրերը մասնակցել են անհատական դասընթացների՝ ձեռքբերելով համապատասխան վկայականներ:

«Դիլիջան համայնքի տրանսպորտ և լուսավորություն» ՀՈԱԿ

2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում «Դիլիջան համայնքի տրանսպորտ և լուսավորություն» ՀՈԱԿ-ը իրականացրել է արտաքին լուսավորության համակարգի բարելավման աշխատանքներ: Տեղադրվել և փոխվել են լուսատուներ, իրականացվել են նոր գծերի կառուցման, կտրված լարերի վերականգնման և այլ տեխնիկական աշխատանքներ:

Ստորև ներկայացվում են տեղադրված լուսատուների հասցեները և քանակը.

- Աղավնավանք – 13 հատ լուսատու
- Խաչարձան – 14 հատ լեդ, 2 լուսատու
- Գոշ գյուղ – 5 հատ լուսատու
- Ներքին Գոշ – 3 հատ լուսատու
- Հովք – 29 հատ լուսատու, 80 մետր նոր գծի կառուցում
- Թեղուտ – 6 հատ լուսատու, նոր սյան մոնտաժ
- Շահումյան – 16 հատ լուսատու
- Շամախյան փողոց (ներառյալ բոլոր նրբանցքները) – 141 հատ լուսատու
- Հրշեջ կայանի մոտ – 1 հատ լուսատու
- Կիրովի տան մոտ – 3 հատ լուսատու
- Օրջոնիկիձե փողոց (իր նրբանցքներով) – 12 հատ լուսատու, 100 մետր կաբել
- Հովսեփյան փողոց – 18 հատ լուսատու, նոր գծի կառուցում, կարճ միացման վերացում
- Կաղնի-Խաչ – 1 հատ լուսատու, 1 պուսկատել, 1 սյան մոնտաժ,

• Առաջին փողոց – 1 հատ լուսատու, կտրված լարի վերականգնում
• Գայի փողոց – 4 հատ լուսատու, 1 սյան մոնտաժ,
• Մյասնիկյան փողոց – 25 հատ լուսատու, 75 լամպ, 83 շառ, 7 սյան մոնտաժ,
• Կենտրոն – 93 շառ, մալուխի փոխարինում
• Ուսանողական փողոց – 3 հատ լուսատու, պուսկատել տեղադրում
• Կամո փողոց – 37 հատ լուսատու, 11 լուսատու, կտրված լարի վերականգնում,
• 14, 15, 28, PR-1 ենթակայաններ – թողարկիչ, մալուխ, մոնտաժային լար, ավտոմատ
• Լեռնային Հայաստանի մոտ – 16 հատ լուսատու, թողարկիչ
• Վասիլև փողոց – 21 հատ լուսատու, կտրված լարի վերականգնում,
• Կալինինի փողոց – 6 սյան փոխում
• Մոլդովական փողոց – 16 հատ լուսատու, Այբ դպրոցի մոտ 12 հատ լուսատու, 30 մետր կաբել
• Աբովյան փողոց – 19 հատ լուսատու
• Գետափնյա – 2 հատ լուսատու
• Առյուծների մոտ – 15 հատ լուսատու, 45 լամպ, կաբելի փոխարինում, կտրված լարի վերականգնում
• Անդրանիկի թաղամաս – 23 հատ լուսատու, կտրված լարի վերականգնում
• Մխիթարյան թաղամաս – 68 հատ լուսատու
• Հակոբջանյան-Աթարբեկյան փողոցներ – 44 հատ լուսատու
• Սայաթ-Նովա փողոց – 1 հատ լուսատու, կարճ միացման վերացում
• Հաղարծին – կտրված լարի վերականգնում
• Վանաձորի ճանապարհ – 35 հատ լուսատու, նոր գծի կառուցում
• Հովեր – 17 հատ լուսատու, նոր գծի կառուցում
• Լատոկի ձոր – 13 հատ լուսատու
• Մատինովի աղբյուր – 10 հատ լուսատու, 10 լամպ, 16 կանաչ լամպ, 20 դեղին լամպ
• Հրապարակ և հարակից տարածք (փոստ, Մատինով, Ամֆիթատրոն)՝ համայնքապետարանի դիմացի դեկորատիվ պլաֆոնների փոխում, 4 հատ լուսատու, 15 շառ
• «Միմինո» փառատոնի նախապատրաստման համար – 250 մետր մալուխ, 250 մետր ԱՊՎ լար, 50 ռեզետկա, 96 մետր պղնձե լար
• Կալցևոյի դրոշի համար – եռակցման աշխատանք

Դիլիջանի հասարակական տրանսպորտի քանակն անփոփոխ է, միայն ժամային որոշակի փոփոխություններ են տեղի ունեցել:

«Դիլիջան համայնքի կոմունալ սպասարկում» ՀՈԱԿ

Ամբողջ տարվա ընթացքում Դիլիջան համայնքում իրականացվել են մի շարք բարեկարգման և մաքրման աշխատանքներ՝ ապահովելով համայնքի բնակիչների համար ավելի մաքուր և բարեկարգ միջավայր:

Աղբահանության ոլորտում, 2024 թվականի ընթացքում հավաքվել է 32,401 խմ աղբ՝ ապահովելով համայնքի կանոնավոր մաքրությունը: Բացի այդ, իրականացվել է սանմաքրում՝ բնակավայրերի տարածքները պահպանելով սանիտարական նորմերին համապատասխան:

Ջրատարերի մաքրման աշխատանքները իրականացվել են համայնքի տարբեր հատվածներում՝ ապահովելով անձրևաջրերի բնական հոսքը և կանխելով խցանումները: Ծառերի խոր էտման աշխատանքները նպաստել են կանաչ տարածքների առողջացմանը, իսկ էտված ծառերից գոյացած փայտանյութը տրամադրվել է անապահով ընտանիքներին՝ նրանց դիմումների համաձայն:

Համայնքի ենթակառուցվածքների վերականգնման շրջանակում վերանորոգվել են հենապատերը, մայթեզրերը, ինչպես նաև տեղադրվել են նոր աղբամաններ՝ փոխարինելով հին և վնասված աղբամանները: Աղբամանների տեղակայման վայրերը բետոնապատվել են՝ ապահովելով դրանց ամրությունը և մաքուր միջավայրը:

Բարեկարգման ծրագրի շրջանակում վերանորոգվել և վերականգնվել են համայնքի խաղահրապարակները, վերանորոգվել են ՀՈԱԿ-ին տրամադրված տրանսպորտային միջոցները, որոնք անհրաժեշտության դեպքում տրամադրվել են բնակիչներին վարձակալությամբ:

Ճանապարհային բարեկարգման աշխատանքների ընթացքում համայնքի փողոցները ջրային լվացում են ստացել, իսկ արվարձանային հատվածներում իրականացվել է խճապատում և ցանկապատերի վերանորոգում: Բետոնապատվել է Առաջին փողոցի մի հատվածը, ինչպես նաև թաղամասերի միջև գտնվող աստիճանները՝ նորերով փոխարինվելով կամ վերանորոգվելով:

Համայնքի ընդհանուր բարեկարգման ծրագրի շրջանակում մաքրվել են ինչպես հին, այնպես էլ գործող աղբավայրերը, իսկ գերեզմանատներում իրականացվել են տարածքների մաքրում և ճանապարհների հարթեցում:

Հուշարձանների խնամքի աշխատանքների շրջանակում տարվա ընթացքում մաքրվել են համայնքի մշակութային և պատմական հուշարձանները՝ ապահովելով դրանց պատշաճ տեսքը:

Կանաչապատման ծրագրի շրջանակում իրականացվել է ծառատունկ:

«Դիլիջանի բնակարանային տնտեսություն» ՀՈԱԿ

2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում «Դիլիջանի բնակարանային տնտեսություն» ՀՈԱԿ–ն իրականացրել է 68 բազմաբնակարան շենքերի կոյուղագծերի մասնակի վերանորոգում, 19 բազմաբնակարան շենքերի ջրագծերի մասնակի վերանորոգում, 52 բազմաբնակարան շենքերի տանիքների մասնակի վերանորոգում, 3 բազմաբնակարան շենքերի ջրագծեր ամբողջությամբ փոխարինվել են նոր խողովակներով, 5 բազմաբնակարան շենքերի մուտքերում տեղադրվել են պատուհաններ:

Դիլիջան համայնքի գյուղական բնակավայրեր

Թեղուտ գյուղական բնակավայր

2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում Թեղուտ բնակավայրում առաջնահերթություն է տրվել բյուջեի մուտքագրվող բոլոր հարկատեսակների հավաքագրման աշխատանքներին, ինչը նպաստել է համայնքի եկամուտների կատարողականի բարձրացմանը: Բնակավայրում իրականացվել են սելավատարների մաքրման, փողոցների սանիտարական մաքրման աշխատանքներ՝ նպաստելով շրջակա միջավայրի բարելավմանը:

ՀՀ կառավարության և Դիլիջանի համայնքապետարանի համատեղ սուբվենցիոն ծրագրի շրջանակում կառուցվել է նոր ջրագիծ, ինչը թույլ է տվել ապահովել բնակիչներին որակյալ խմելու ջրով: Բարեկարգվել են գրեթե բոլոր ներհամայնքային ճանապարհները, ինչպես նաև վերանորոգվել են «Սարի հողեր», «Դիմաց լեռ» և «Թալա» հանդամասեր տանող ճանապարհները: Աղբահանության գործընթացը կազմակերպվել է կանոնավոր և արդյունավետ կերպով:

Հաղարծին գյուղական բնակավայր

2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում Հաղարծին գյուղական բնակավայրում Հաղարծին բնակավայրում պարբերաբար կատարվել են խմելու ջրի 2 ջրամբարների մաքրման աշխատանքներ: Տարբեր փողոցներում կատարվել է սելավատարների, կոյուղատարների, ձորերի մաքրման աշխատանքներ: Կատարվել է ջրահեռացման համակարգերի մաքրման և տուֆապատ ճանապարհահատվածների սպասարկման աշխատանքներ: Հաշվետու ժամանակահատվածում հաճախ իրականացվել են Հաղարծին բնակավայրին մատակարարվող մայր ջրագծերի արտաքին և ներքին ցանցերի վերանորոգման աշխատանքներ:

Հաղարծին բնակավայրի բոլոր փողոցներում կատարվել են խճապատման և հողահարթեցման աշխատանքներ: Ձմռան ամիսներին ճանապարհահատվածներում կատարվել են ձնամաքրման աշխատանքներ: Մաքրվել և վերականգնողական աշխատանքներ են իրականացվել մատակարարվող ջրի բոլոր ակունքներում:

Պարբերաբար այցելել, դրոշները նորով փոխարինել և հարգանքի տուրք է մատուցվել զոհված հերոսների գերեզմաններին: Գերեզմանատներում պարբերաբար իրականացվել են դարպասների, ցանկապատերի վերանորոգման և վերականգնողական աշխատանքներ: Ամենօրյա ռեժիմով կատարվել է բնակիչների ընդունելություններ:

Գոշ գյուղական բնակավայր

2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում Գոշ բնակավայրում իրականացվել է 100 գծամետր երկարությամբ խմելու ջրագծի կառուցում՝ համայնքի ջրամատակարարման բարելավման նպատակով: Բնակավայրի միջհամայնքային և սարամիջյան ճանապարհները ենթարկվել են վերանորոգման՝ ապահովելով տարանցիկ երթևեկության հարմարավետությունը:

Կատարվել են խմելու ջրագծերի կառուցման նախագծային քննարկումներ և վերահսկողական աշխատանքներ՝ բնակավայրի գույքահարկերի գանձման գործընթացի կարգավորման նպատակով: Իրականացվել է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարների գանձում, այդ թվում՝ թույլտվությունների, աղբահանության վճարների հավաքագրում:

Գոշ բնակավայրում կնքվել են նոր պայմանագրեր՝ խոտհարքների և արոտավայրերի վարձակալության վերաբերյալ, իսկ համապատասխան վարձավճարները գանձվել են: Կազմվել են որոշման նախագծեր, որոնք վերաբերել են բնակավայրի հասցեների տրամադրմանը, ինչպես նաև Գոշ բնակավայրի և Դիլիջանի համայնքապետարանի միջև կնքված պայմանագրերին:

Բացի այդ, կատարվել է ընտանի կենդանիների ամենամյա հաշվառում, ինչպես նաև համայնքային գույքի գույքագրում՝ ապահովելով համայնքային ունեցվածքի վերահսկողությունը: Պարբերաբար կազմակերպվել է բնակիչների ընդունելություն, որի ընթացքում բարձրացված հարցերին տրվել են համապատասխան լուծումներ:

Խաչարձան գյուղական բնակավայր

2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում Խաչարձան գյուղական բնակավայրում իրականացվել են խմելու ջրագծի ներքին ցանցի վերանորոգման աշխատանքներ, կատարվել են դաշտամիջյան ճանապարհների փոսալցման, վերականգնողական աշխատանքներ:

ՀՀ Կառավարության և Դիլիջանի համայնքապետարանի համատեղ սուբվենցիոն ծրագրով տուֆապատվել են բնակավայրի 2-րդ և 3-րդ փողոցները:

Բնակավայրի 1-ին և 3-րդ փողոցներում գիշերային լուսավորության հին լապտերները փոխարինվել են նոր էներգախնայող լապտերներով:

Վարչական ղեկավարի մոտ պարբերաբար տեղի է ունեցել բնակիչների ընդունելություն՝ առաջացած հարցերին ու խնդիրներին լուծումներ առաջարկելու նպատակով:

Աղավնավանք գյուղական բնակավայր

2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում Աղավնավանք գյուղական բնակավայրում իրականացվել են 4-րդ, 5-րդ փողոցների ամբողջական և 3-րդ փողոցի մասնակի տուֆապատում: 5-րդ փողոցում կառուցվել է 200 գծ/մ երկարությամբ հենապատ, ինչպես նաև 90 գծ/մ երկարությամբ աստիճանավանդակ, կատարվել են նախագծման աշխատանքներ 3-րդ փողոցի տուֆապատման ծրագրի համար:

«Հույսի ապավեն» բարեգործական կազմակերպության կողմից յուրաքանչյուր եռամսյակ 16 երեխայի տրամադրվել է հագուստ: Բարերար Զառա Քալաջյանի կողմից վճարվել է 7 ուսանողի ուսման վճար: 7 անապահով ընտանիք ընտանիքի տրամադրվել է վառելափայտ: Ավագ Մուսայելյանը ստացել է փայտամշակման գործիքներ:

Արցախից բռնի տեղահանված և Աղավնավանքում բնակություն հաստատած 2 ընտանիք և 1 տեղաբնակ ընտանիք ստացել են 15 խոշոր եղջերավոր անասուն և անասնակեր:

2024 թվականին հողի հարկի, անշարժ գույքի, գույքահարկի և տեղական տուրքերի տարեկան պլանները կատարվել են 100 տոկոսով:

Հովք գյուղական բնակավայր

2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում Հովք գյուղական բնակավայրում իրականացվել են ջրատար խողովակների մաքրման աշխատանքներ, գյուղամիջյան ճանապարհների փոսալցում և հարթեցում, ինչպես նաև խմելու ջրի ակունքների մաքրում՝ բարելավելով ջրամատակարարման համակարգի արդյունավետությունը:

Բնակավայրի վարչական ղեկավարը կազմակերպել է բնակիչների ընդունելություն, որի ընթացքում քննարկվել և ներկայացվել են համապատասխան լուծումներ բարձրացված խնդիրներին: Ամենօրյա աշխատանքներ են իրականացվել բնակիչների հետ՝ համայնքային հարցերի կարգավորման և կյանքի որակի բարելավման նպատակով: